



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՊԱՏՄԱՐՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԸԱՐ, ՀԱՏՈՐ Է
HISTORICAL-CULTURAL HERITAGE SERIES, VOLUME VII

Մատենաշարի գիտական խմբագիր՝ Հակոբ Միմոնյան, խմբագիր՝ Ներսես Կոստանյան
Scientific editor of the Series: Hakob Simonyan, editor: Nerses Kostanyan





Հրատարակվել է ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության կոմիտեի, «Միտք» վերլուծական կենտրոնի և «Փյունիք» բարեգործական հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ: Գիրքը տպագրվել է նաև Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Գրքի բովանդակությունը միմիայն հեղինակներին է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

This book is published with assistance from the Ministry of Culture of the Republic of Armenia, the Committee for Science of the Ministry of Education and Science of the Republic of Armenia, "Mitq" Analytical Center and "Pyunik" Benevolent Foundation. This publication is also made possible by the support of the American People through the United States Agency for International Development (USAID). The contents are the sole responsibility of the authors and do not necessarily reflect the views of USAID or the United States Government.

Խմբագիրն իր խորին շնորհակալությունն է հայտնում.

Գրքի տպագրությանն օժանդակելու համար՝ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանին և փոխնախարար Արև Սամուելյանին, ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:

Խորհրդատվության համար՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին, ԱՄՆ-ի Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի Քոթսենի անվան հնագիտության ինստիտուտին, ՌԳ ԳԱ Նյութական մշակույթի ինստիտուտին:

Լուսանկարների համար՝ ՀՀ մշակույթի նախարարության Հայաստանի պատմության թանգարանին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին, Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանին, Զավեն Սարգսյանին, Աշոտ Մովսեսյանին և Բորիս Գասպարյանին:

The editor expresses his deepest gratitude to:

the Minister of Culture of RA, Hasmik Poghosyan and the Deputy Minister Arev Samuelyan, the Chairman of the Committee for Science of the Ministry of Education and Science of RA, Samvel Harutyunyan for the assistance in the publication of the volume;

the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA, UCLA Cotsen Institute of Archaeology, and the Institute of Material Culture of the Academy of Sciences of the Russian Federation for valuable advice;

the Museum of History of Armenia of the Ministry of Culture of RA, the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA, "Erebuni" Historical and Archaeological Museum-Reserve of the Yerevan Municipality, Zaven Sargsyan, Ashot Movsesyan and Boris Gasparyan for supplying photographs.

Գրախոսներ՝ Գրիգոր Ե. Արեշյան, պրոֆեսոր, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի Քոթսենի անվան հնագիտության ինստիտուտի փոխտնօրեն և Պավել Ս. Ավետիսյան, պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Reviewers: Gregory E. Areshian, Ph.D., Director, UCLA Research Program in Armenian Archaeology and Ethnography, Assistant Director, Cotsen Institute of Archaeology, University of California, Los Angeles & Pavel S. Avetisyan, Ph.D., Director, Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of the Republic of Armenia



ՀՀ մշակույթի նախարարություն
Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն
Ministry of Culture of the Republic of Armenia
Research Center for Historical-Cultural Heritage

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ARCHAEOLOGICAL HERITAGE OF ARMENIA

Խմբագիր՝ Հակոբ Սիմոնյան / Editor: Hakob Simonyan

ՀՏԴ-902/904 (479.25)
ԳՄԴ 63.4 (2Հ)
Հ 247

Հրատարակվել է Պատմամշակութային ժառանգության
գիտահետազոտական կենտրոնի գիտխորհրդի երաշխավորությամբ

Հ. Միմոնյան, Վ. Լյուբին և Ե. Բելյաևա, Գ. Արեշյան, Կ. Թոխատյան,
Ս. Հմայակյան, Հ. Հակոբյան, Հ. Սանամյան

Հայաստանի հնագիտական ժառանգությունը / խմբագիր՝ Հ. Ե. Միմոնյան,
Հ 247 Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն. – Երևան:
«Հուշարձան», 2013, 96 էջ

Պատմամշակութային ժառանգության մատենաշարի հերթական հատորը
նվիրված է Հայաստանի հնագիտական ժառանգությանը: Ժողովածուն
ներկայացնում է հնագույն և հին Հայաստանի մշակույթները, հնագիտական
նորագույն հայտնագործությունները, ինչպես նաև վաղ և զարգացած միջնադարի
նարտարապետական հուշարձանները:

Approved for publication by the Academic Advisory Board of the Research
Center for Historical-Cultural Heritage

H. Simonyan, V. Lyubin and E. Belyaeva, G. Areshian, K. Tokhatyan,
S. Hmayakyan, H. Hakobyan, H. Sanamyan

Archaeological Heritage of Armenia / Editor: H. Simonyan,
Research Center for Historical-Cultural Heritage. – Yerevan: Hushardzan, 2013,
96 pages

This volume of the Historical-Cultural Heritage Series is devoted to the archaeological
heritage of Armenia. It presents the prehistoric and ancient cultures of Armenia,
recent archaeological discoveries as well as architectural monuments of the Early and
High Middle Ages.

HTD 902/904 (479.25)
GMD 63.4 (2Հ)
H 247
ISBN 978-9939-9087-0-0

© Հակոբ Միմոնյան և գործընկերներ
© Hakob Simonyan with collaborators
© ՀՀ մշակույթի նախարարություն
© Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն, 2013
© Ministry of Culture of the Republic of Armenia
© Research Center for Historical-Cultural Heritage, 2013

Հայաստանի
հնագիտական ժառանգությունը

խմբագիր
Հակոբ Միմոնյան

անգլերենի թարգմանիչ
Արմինե Հայրապետյան

գրաֆիկական հայեցակարգ, նախագծում
և էջադրում
Հարություն Սամուելյան

ծրագրի համակարգող
Արև Սամուելյան

Archaeological Heritage of Armenia

editor
Hakob Simonyan

English translation
Armine Hayrapetyan

graphic concept, design & layout
Haroutiun Samuelian

programme coordinator
Arev Samuelyan



Քարաշամբ,
Երեսապատման
դրվագագարդ թիթեղ,
Ք.ա. XXIII-XXII դդ.

Qarashamb,
embossed foil-plate,
23rd-22nd cc. BC

Հասմիկ Պողոսյան

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար

Hasmik Poghosyan

Minister of Culture of the Republic of Armenia

Հայաստանի հնագույն և հին պատմության, մշակույթի և արվեստի իրենց վկայությունների ընտրանին ներկայացնող պատկերազարդ այս գիրքը համառոտ ակնարկ է մեր ժողովրդի հազարամյա գործունեության և արարման մասին: Սեղմ, սակայն ամփոփ ներկայացված են ստորին քարի դարից մինչև զարգացած միջնադարի հնագիտական և ճարտարապետական գլուխգործոցները, որոնք բացառիկ ճոխությամբ ցուցադրում են հայ ժողովրդի ծագման ու զարգացման ուղին: Այստեղ միասնական սկզբունքով ի մի են բերվել հնագետների մի քանի սերնդի անխոնջ աշխատանքի շնորհիվ բացահայտված քարի դարի, արտադրող տնտեսակարգի, վաղ պետական կազմավորումների և Առաջավոր Ասիայի հզորագույն պետությունների՝ Վանի թագավորության, Երվանդունիների, Արտաշիսյանների և Արշակունիների հարստությունների մշակույթները: Գրքի վերջին երկու գլուխը նվիրված է Հայաստանի՝ Քրիստոնեությունն առաջինը պետական կրոն հռչակած երկրի եկեղեցիների և վանքերի ճարտարապետությանը, զուտ հայկական մշակույթին բնորոշ խաչքարային արվեստին, վաղ միջնադարյան կոթողներին:

Գրքում ընդգրկվել են նաև վերջին տարիների հնագիտական հայտնագործությունները, որոնք հիմնավորում են մեր ժողովրդի կերտած բազմադարյան մշակույթի անընդհատականությունը և նորովի մեկնաբանում Հայաստանի պատմության մոռացված էջերը: Հայկական լեռնաշխարհի հնագիտական ժառանգությունն ամբողջացնող այս ժողովածուն հիանալի նվեր է զբոսաշրջիկներին, որոնք կարող են լիարժեք պատկերացում կազմել Հայոց հնագույն մշակույթի մասին, ուղենշել իրենց անցնելիք ճամփան, այցելել և անձամբ ըմբռնել մեր հյուրընկալ հողի հմայքը, մոտիկից ծանոթանալ հազարամյակներ ի վեր իր բնօրրանում ապրող ժողովրդի կենցաղին ու բարքին, հնի ու նորի զարմանալի համադրությանը:

Material evidence of the ancient and medieval Armenian history, culture and art are presented in this book as a concise review of thousands of years of activity and creativity of our people. Archaeological and architectural masterpieces from the Lower Paleolithic to the High Middle Ages comprehensively reflect the path of the origins and development of the Armenian people. Thorough efforts of several generations of archaeologists are systematically condensed in this book revealing the cultures of the Stone Age, origins of farming economies, early state formations from the dawn of civilizations to the most powerful states of the Near East – the Van Kingdom, Ervandid, Artashesian and Arshakuni dynasties. The last two chapters of the book are devoted to the architecture of churches and monasteries of Armenia, the country being the first to adopt Christianity as a state religion, and to *khachqar* art which is characteristic only to Armenian culture, as well as to the early medieval monuments, the bas-reliefs and decorated bricks of the royal tomb of the Armenian kings built in 364 AD in Aghtsq.

The book also presents recent archaeological discoveries complementing and giving new interpretations to forgotten pages of the Armenian past. This colorful book presents for the first time the Armenian archaeological heritage to those who visit Armenia and it becomes a wonderful gift for tourists enabling them to get a complete notion of the ancient Armenian culture, to plan their forthcoming paths, to visit and enjoy the beauty of our hospitable land, the life and customs of the people inhabiting this cradle of civilization for millennia, in wonderful combination of antiquity and modernity.

Գիրքը նախաբանում
Ծար, հրեշտակի
հարթաքանդակ, X-XIII դդ.

on the title page:
Tsar, relief depicting an
angel, 10th-13th cc.

Հասմիկի վերջին էջին՝
Ներքին Նավեր, դամբ. 3,
Ք.ա. XX-XIX դդ.,
սև փայլեցված կարաս
համաշխարհային
վիշապօձի պատկերով

on the back cover:
Nerqin Naver, kurgan 3,
20th-19th cc. BC,
black polished *karas* with the
image of a universal dragon-
snake

Էդուարդ Աբրահամյան
«Միտք» վերլուծական կենտրոնի տնօրեն, պատմ. գիտ. թեկնածու



Հայկական լեռնաշխարհը, բազմաթիվ ազգերի նախահայրենիքը, մի առեղծվածային և քիչ ուսումնասիրված տարածաշրջան է: Հայաստանի և այստեղ հազարամյակներով բնակվող հայ էթնոսի գոյության և գործունեության մասին հաղորդումներ կան ասորական, եգիպտական, շումերական, պարսկական, հնդկական և հնագույն այլ ազգերի սրբազան տեքստերում: Հնագիտական պեղումներն ու հայտնագործությունները, որոնք ամփոփ ներկայացնում է գիտական այս ժողովածուն, մեզ հիշեցնում են Եվրոպացի նշանավոր գիտնականների և մտավորականների գնահատականները հայ ազգի և հայկական քաղաքակրթության մասին: Օրինակ, անգլիացի արևելագետ Դավիթ Մարշալ Լանգը գրում է. «Չնայած իր փոքր տարածքին, Հայաստանն այն քիչ երկրներից է, որոնք անգնահատելի և մեծ ներդրում են ունեցել քաղաքակրթության մեջ»: Ավստրիացի գիտնական Էլիզաբեթ Բաուերը նշում է. «Հայաստանի մասին քչերը գիտեն, սակայն Եվրոպյան մշակութային ժառանգության առումով մեծապես պարտական է նրան: Պատմության արշալույսին Հայաստանը քաղաքակրթության բնօրրաններից էր... Ք.ա. I հազարամյակում Հայաստանի տնտեսությունը, արվեստն ու ավանդույթներն այնքան էին զարգացած, որ նրա մշակույթը խթանում էր Եգիպտոսին, Հունաստանին և Հռոմին ինչպես նյութապես, այնպես էլ հոգևոր առումով», իսկ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ուիլյամ Գլադսթոնը սեղմ բնորոշել է. «Ծառայել Հայաստանին՝ նշանակում է ծառայել քաղաքակրթությանը»:

Որոշակի է, որ հայկական քաղաքակրթությունը մեծ ազդեցություն է ունեցել ոչ միայն հարևան, այլև հեռավոր ժողովուրդների մշակույթի և հոգևոր ներաշխարհի վրա: Ուստի՝ պատահական չէ, որ գրեթե բոլոր կրոններում, այդ թվում՝ քրիստոնեության մեջ, Հայկական լեռնաշխարհը ներկայանում է որպես սրբազան, հոգևոր մի երկիր: Հնագիտական հայտնագործությունները կոչված են վերահիմաստավորելու մարդկության պատմության ընթացքը, բացահայտելու հնագույն ազգերի, այդ թվում՝ հայերի աշխարհընկալումները կյանքի իմաստի ու տիեզերքի մասին:

Վերին Նավեր, դամբ. II,
Ք.ա. XVI-XV դդ.

Verin Naver, burial II,
16th-15th cc. BC

Eduard Abrahamyan, Ph.D.
Director, "Mitq" Analytical Center



Երևան,
ձկնակերպ վիշապակոթող,
Ք.ա. III-II հազ.

Yerevan,
fish-like vishap stela,
3rd-2nd mill. BC

The Armenian Highland, homeland to many different peoples, is a mysterious and little explored territory. References concerning the Highlands, Armenia, and the Armenian ethnicity, which lived on that territory for several millennia, are preserved in Sumerian, Assyrian, Egyptian, Persian, and other texts of ancient peoples.

The recently conducted archaeological excavations and discoveries, concisely presented in this book, remind us of the assessments of many distinguished European scholars and intellectuals. For example, British Orientalist David Marshall Lang wrote, "Despite its small territory, Armenia is one of those few countries which made an invaluable and major contribution to civilization." Austrian scholar, Elisabeth Bauer, mentions that "in general, much too little has been known about Armenia, even though, culturally speaking, Europe owes her a considerable debt. At the dawn of history, Armenia was one of the cradles of civilization. Millennia before the Christian era, the economy, arts, and popular traditions of Armenia had developed to such an extent that her culture stimulated Egypt, Greece, and Rome, both materially and spiritually." Earlier in the nineteenth century, British Prime Minister William Gladstone, briefly expressed himself saying, "To serve Armenia is to serve civilization."

It is quite certain that the inhabitants of Armenia had important connections not only with neighboring cultures but also with more distant peoples. So it is not an accident that many religions, including Christianity, refer to the Armenian Highland as a territory with sacred meanings.

Archaeological discoveries provide for a more accurate reinterpretation of the processes of human history and allow for an understanding of the worldview and cosmological ideas together with many other aspects of cultures of ancient peoples, including the Armenians.



Զորաց բարեր,
մենաբարեր,
դամբարաններ,
Ք.ա. III-II հազ.

Zorats Qarer,
menhirs, burials,
3rd-2nd mill. BC

Հակոբ Մինոյան ՄՈՒՏՔ

Հայկական լեռնաշխարհն ավելի քան 400 000 կմ² մակերեսով և ծ.մ. 1700 մ միջին բարձրությամբ ֆիզիկա-աշխարհագրական մի ամփոփ միավոր է: Տարածվում է Իրանական և Փոքր Ասիական՝ Անատոլիական բարձրավանդակների միջև: Հյուսիսում եզերված է Սև ծովով և Կուր գետով, հարավում՝ Միջագետքի հարթավայրերով: Ընդգրկում է ժամանակակից Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը, Վրաստանի և Ադրբեջանի՝ Կուր գետից հարավ ընկած, Թուրքիայի արևելյան և Իրանի արևմտյան շրջանները: Գերմանացի հռչակավոր գիտնական Հ. Աբիխը, XIX դ. խորապես ուսումնասիրելով Մեծ Կովկասյան լեռնաշղթայից հարավ ընկած տարածաշրջանը, եզրակացրեց, որ Կուր գետից հարավ տարածվում է մի բարձրադիր լեռնաշխարհ, որն իր կլիմայական և երկրաբանական կառուցվածով հստակ զատորոշվում է հարևան տարածաշրջաններից: Նա, հետևելով հունա-հռոմեական աշխարհագրագետների ավանդույթին, այն ժամանակ այստեղ բնակվող հիմնական ժողովրդի՝ հայերի անունով լեռնակղզին անվանեց Հայկական լեռնաշխարհ: Այս անվանումը համընդհանուր ճանաչում և կիրառություն ստացավ: Հետագայում, 1915 թ. Օսմանյան կայսրությունում, պետականորեն կազմակերպված հայկական ցեղասպանությունից հետո, երբ հայ ժողովուրդի մի զգալի հատվածն արմատախիլ արվեց և բնաջնջվեց իր պատմական հայրենիքում, Թուրքիան սկսեց ամեն կերպ պայքարել, որպեսզի վերացվի հայ անվան հետ առնչվող ամեն մի հիշատակություն: Նրա ճնշմամբ Հայկական լեռնաշխարհի փոխարեն սկսեցին կիրառել արհեստաձին «Արևելյան Անատոլիա» տերմինը, որը թարգմանաբար նշանակում է արևելյան արևելք:

Հայկական լեռնաշխարհը հայ ժողովրդի բնօրրանն է: Հազարամյակներ շարունակ բնակվելով այստեղ, հայկական ցեղերը ձևավորվել են որպես ժողովուրդ, հիմնել իրենց պետությունները, հնագույն քաղաքակրթությունները, ինքնատիպ և վառ մշակույթը: Հայկական լեռնաշխարհի հնագիտական հարուստ ժառանգությունն ընդգրկում է շուրջ 2 միլիոն տարվա շրջափուլ: Ժողովածուն ներկայացնում է պատմա-աշխարհագրական այս միասնական տարածաշրջանի դիմանկարը, վկայում այն կարևորագույն դերակատարման մասին, որ խաղացել է Հայաստանը Հին աշխարհի մշակույթների համատեքստում:



Գորայք,
Մեծ դամբարանաբլուր,
Ք.ա. IV-III հազ.

Gorayq,
The Big Kurgan,
4th-3rd mill. BC



Hakob Simonyan

INTRODUCTION

The Armenian Highland is a separate physical-geographical unit occupying approximately 400,000 square kilometers with an average elevation of 1,700 meters above sea level. It is the central among the three plateaus of the Near Eastern Highlands, along with the Iranian and Anatolian plateaus, which lay to the southeast and west, respectively. It is bordered in the north by the Black Sea and the Kura River, and in the south by the Mesopotamian plain. It includes the entire territory of the modern Republic of Armenia, some regions of Georgia and Azerbaijan south from the Kura River, northeastern regions of Turkey, and northwestern regions of Iran. This geographic description of the Near East was suggested in the nineteenth century by the German geographer and geologist Hermann von Abich who identified the specific characteristics of the geographical, climatic and geological conditions of the Armenian Highland. Following the tradition of Greco-Roman geographers and using the traditional name of the ethnic group inhabiting this area, von Abich called it the Armenian Highland. This term was commonly accepted and was largely used throughout the World until the 1923 Treaty of Lausanne, which established the current political borders of the nascent Republic of Turkey. After the Genocide of the Armenians, carried out by the Young Turks in the Ottoman Empire in 1915, which eliminated and exterminated the Armenians in their historical homeland, a policy of pressure was exerted by consequent governments of Turkey to eliminate all uses of the word “Armenian” and instead of “Armenian Highland” the term “Eastern Anatolia” was invented.

The Armenian Highland is the cradle of the Armenian people. Inhabiting this territory for thousands of years, the Armenian – speaking ethnic groups formed a nation, established their kingdoms, ancient civilizations, creating a bright and unique culture. The rich archaeological heritage of the Armenian Highland spans approximately over two million years. The region’s successive cultures present the image of this historical-cultural area, and testify to the important role that Armenia played in the context of Near Eastern civilizations.



Վասիլի Լյուբին և Ելենա Բելյաևա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՔԱՐԻ ԴԱՐԸ



Կուրթան, ձեռքի հատիչ, վաղ աշել՝ 1,9-1,8 մ.ա.մ.ա.

Կուրթան, ձեռքի հատիչ, միջին աշել՝ 600-250 հ.ա.մ.ա.

Գորայք, ձեռքի հատիչ, ուշ աշել՝ 250-40 հ.ա.մ.ա.

Kurtan, handaxe, Early Acheulian period (1.9-1.8 Myr)

Kurtan, handaxe, Middle Acheulian period (600-250 Kyr)

Gorayq, handaxe, Late Acheulian period (250-40 Kyr)

Հայաստանի առաջին բնակիչները հին քարեդարի դարի մարդանման էակներն էին: Հայաստանի Հանրապետության տարածքը, որն զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանները, բացառիկ նպաստավոր էր հին քարի դարի որսորդների և հավաքչական կենցաղ վարողների համար: Հրաբխային բազմազան լանդշաֆտը նրանց ապահովում էր քարե գործիքների պատրաստման համար անհրաժեշտ հրաբխածին հումքով՝ վանակատ, բազալտ, դացիտ և այլն, ինչպես նաև կենսաապահովման այլ միջոցներով՝ որսի կենդանիներ, բուսական սննդի առատ տեսակների, այդ թվում՝ հացազգիներ, խմելու ջրի անսահմանափակ պաշարներ և այլն:

Հին քարի դարի առաջին գտածոները Հայաստանում հայտնաբերվել են դեռևս XIX դ. վերջին: Դրանց թիվն այժմ հասնում է հազարների, որոնք պատկանում են ստորին քարի դարի տարբեր ժամանակաշրջաններին:

Մեծաքանակ է վաղ հին քարի դարի՝ աշելյան *ինդուստրիան*, մասնավորապես ձեռքի հատիչների՝ վանակատի և դացիտի բնակտորների ու մեծ ցլեպների երկկողմ հարդարումով պատրաստված սրածայր, համաչափ եզրերով խոշոր գործիքների հավաքածուն: Ձեռքի հատիչների կանոնավոր ձևերը, լայնական նուրբ կտրվածքները և բանող եզրերի խնամքով հարդարումը վկայում են, որ դրանց հիմնական խումբը վերաբերում է ուշ աշելյան ժամանակաշրջանին (600-270/250 հազար տարի մեզնից առաջ, այսուհետ հ.ա.մ.ա.): Աշելյան *ինդուստրիան* պատրաստել է *Homo erectus* կոչվող հնամարդը:

Աշելյան վերգետնյա գտածոներ բացահայտվել են Հրազդանի ավազանում (Արզնի, Ջրաբեր, Հատիս և այլն), Արտին լեռան և Արագածի լեռնազանգվածի հարավ-արևմտյան (Սատանի-դար, Դաշտադեմ) լանջերին, Հայաստանի հյուսիսում, հրաբխածին Ջավախքի լեռնաշղթայի նախալեռնային գոտում՝ շուրջ 20 հնավայր (Բլագոդարնոյե, Նորամուտ և այլն):

Ջավախքի լեռնաշղթայի հնավայրերից մեկում փաստվել է մշակութային շերտ, որը պարունակում էր ոչ միայն ձեռքի հատիչներ, այլև գործիքների և դրանց պատրաստուկների ողջ հավաքածուն՝ միջուկներ, ցլեպներ, շեղբեր, մանր գործիքներ: 2012 թ. Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը ուշ աշելյան բիֆասներ է հայտնաբերել Հայաստանում:

Vasily Lyubin and Yelena Belyaeva
PALEOLITHIC ARMENIA



Գորայք, ձեռքի հատիչ, ուշ աշել՝ 250-40 հ.ա.մ.ա.

Գորայք, լևալուայան տիպի գործիք, ուշ աշել՝ 250-40 հ.ա.մ.ա.

Գորայք, ձեռքի հատիչ, ուշ աշել՝ 250-40 հ.ա.մ.ա.

Gorayq, handaxe, Late Acheulian period (250-40 Kyr)

Gorayq, levallois tool, Late Acheulian period (250-40 Kyr)

Gorayq, handaxe, Late Acheulian period (250-40 Kyr)

The first inhabitants of Armenia were Hominids of the Old Stone Age (Paleolithic). The territory of the Republic of Armenia, located in the northern part of the Armenian Highland, was extremely favorable for Paleolithic hunters and gatherers. An exceptional variety of volcanic landscapes yielded abundant deposits of obsidian, basalt, dacite etc., as well as other natural resources such as wild game, a rich variety of vegetation and cereals, abundant water sources, etc.

The first Paleolithic artifacts were discovered in Armenia at the end of the nineteenth century. As of today, thousands of artifacts are attributed to different periods of the Paleolithic.

As a result of the recent joint expeditions by Armenian and Russian teams in the Lori region (northern Armenia), additional Early Paleolithic sites (Muradovo, Sev Khach, Kurtan) yielding Middle and Early Acheulian industries were discovered. These Early Acheulian artifacts (choppers, picks, crude massive hand-axes) unearthed in the oldest layers underwent isotopic U-Pb testing determining their absolute dates up to 1.8-1.9 million years before present. These finds represent the earliest traces of activity of *Homo erectus* in Eurasia.

Surface finds of Acheulian obsidian artifacts have been recorded in the Hrazdan River valley (Arzni, Jraber, Hatis, etc.), at the Arteni Mountain, and on the southwestern slopes of the Aragats volcano (Satani-dar, Dashtadem). About 20 sites with numerous Acheulian artifacts of dacite rock were discovered in the northern part of Armenia in the foothills of the volcanic Javahkq Ridge (Blagodarnoe, Noramut, etc.).

The assemblage of the Early Paleolithic industries are quite numerous, particularly hand-axes and bifaces – pointed and symmetrical tools, chipped on both sides of a naturally occurring small fragment of stone or a large flake of obsidian or dacite. These Acheulian industries were produced by *Homo erectus*.

The regular shape, thin transverse section, and careful fashioning of most hand-axes are indicative of the Late Acheulian epoch (dating 600-270/250 thousand years ago). In one of the locations along the Javahkq Ridge, an exploration uncovered not only bifaces, but also cores, flakes, blades, and other small tools. In 2012, the expedition of the Research Center for Historical-Cultural Heritage uncovered late Acheulian bifaces in the Syunik region of southern Armenia in the Vorotan river basin at 2200-2400 m above sea level.

Գորայք, ուշ աշխարհի նախամարդու բնակեցրած սարահարթը

Գորայք, ձեռքի հատիչ, ուշ աշխարհի՝ 250-40 հ.տ.մ.ա.

Gorayk, the plateau inhabited by prehistoric man in the Late Acheulian period

Gorayk, handaxe, Late Acheulian period (250-40 Kyr)

տանի Հանրապետության հարավում՝ Սյունիքի մարզում, Որոտանի ակունքներում, ծ.մ. 2200-2400 մ բարձրությամբ սարահարթում:


Վերջին տասնամյակում հայ-ռուսական համատեղ արշավախումբը հանրապետության հյուսիսում բացահայտել է նաև վաղ հին քարի դարի՝ միջին- և վաղ աշխարհի հուշարձաններ (Մուրդուվո, Սև-խաչ, Կուրթան): Ուրան-արճնային իզոտոպային տարրալուծման տվյալները վկայում են, որ վաղ աշխարհի մշակութային շերտերի և հնագույն գտածոների (չոպերներ, սրածայրեր, գնդավածեղ, կոպիտ հատիչներ) բացարձակ տարիքը 1,8-1,9 միլիոն տ.մ.ա.: Սրանք Եվրասիայի ընդարձակ տարածաշրջանում *Homo erectus*-ի գործունեության հնագույն հետքերն են:

Հին քարի դարի միջին փուլում (շուրջ 270/250-40 հ.տ.մ.ա.) նեանդերթալյան մարդը բնակվել է գետերի կիճերի մերձակա քարայրներում (Երևան 1, Լուսակերտ 1 և 2, Հովք-1 և այլն) և բարձրադիր սարահարթերում (Արագածի հարավային լանջերին՝ Դաշտադեմ, Անուսարի մերձակայքում՝ Գորայք):

Ուշ քարի դարում (40-12 հ.տ.մ.ա.), վերջին վյուրմյան սառցապատման ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում եղել են բացառիկ խստաշունչ կլիմայական պայմաններ, որոնց հետևանքով ժամանակակից մարդը՝ *Homo Sapiens*-ը, յուրացրել է այնպիսի տարածքներ, որտեղ կարող էր ապաստանել: Ներկայումս Հայաստանի տարածքում հայտնի է ուշ քարի դարի երկու հուշարձան՝ Աղխու-3 քարայրը և Կալավան-1 բացօթյա կայանը, որոնք տեղակայված են ծ.մ. 1600 մ բարձրության վրա և ներառում են 35-27 և 16-14 հ.տ.մ.ա. ժամանակագրական միջակայքը:

During the Middle Paleolithic (270/250-40 thousand years ago), the Neanderthals inhabited the caves in the river canyons (Yerevan Cave, Lusakert 1 and 2, and Hovk 1) and mountainous valleys (Aragats southern foothills – Dashtadem, Amulsar vicinity – Gorayk).

In the Late, or sometimes called Upper, Paleolithic (40-12 thousand years ago) during the last Würm/Valdai glaciations, severe climate conditions dominated the Armenian Highland. Due to these conditions, modern humans (*Homo sapiens sapiens*) developed new kinds of artifacts. These artifact assemblages were invented in order to adapt to the changed environmental conditions. Since glaciers covered a large part of the Armenian Highland, humans moved to a few areas where they could survive. Nowadays, there are at least two stratified Upper Paleolithic sites in Armenia located at 1600 m a.s.l. – Aghitu-3 cave and Kalavan-1 open-air site, covering the time sequence between 35-27,000 and 16-14,000 years before present.



ՆՈՐ ՔԱՐԻ և ՊՂՆՁԵՔԱՐԻ (ԷՆԵՈԼԻԹ) ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Ակնաշեն, հատված պեղավայրից, Ք.ա. VI հազ.

Aknashen, a scene from the excavations, 6th mill. BC


Քաղաքակրթության զարգացումն սկսվել է հարավ-արևմտյան Ասիայում, մեզնից շուրջ 12000 տարի առաջ, վերջին սառցակաման դարաշրջանի ավարտից և սառցադաշտերի հալչելուց հետո: Միջերկրականի արևելյան ափերի երկայնքով, այն է՝ Լևանտում, Արևելյան Տավրոսի լեռնաշղթայի հարավային լանջերին և Միջագետքի հյուսիսային սահմանում (ներկայիս՝ հարավ-արևելյան Թուրքիա), որոնք հարուստ էին որսի կենդանիներով և հացազգիներով, որտեղ-հավաքչական խմբերը կառուցեցին իրենց առաջին մշտական բնակավայրերը: Մեկ-երկու հազարամյակ անց նրանք սկսեցին մշակել վայրի հացազգիներ և ընտելացնել կենդանիներ: Այս ժամանակաշրջանը, որն ընդունված է անվանել նոր քարի դար կամ նեոլիթ, տևել է մինչև Ք.ա. 5500-5000 թթ.:

Արևելյան Տավրոսից հյուսիս ընկած միջավայրը բոլորովին այլ էր: Այստեղից մինչև Մեծ Կովկասյան լեռնաշղթան, որը բաժանում է Մերձավոր Արևելքը հարավոտասական տափաստաններից, մի ընդարձակ, բարձր լեռնաշղթաներով կտրտված տարածք է: Այն բնորոշվում է տեղանքի ռելիեֆային կտրուկ տատանումներով: Սա Հայկական լեռնաշխարհն է, որտեղ առկա են բազմաթիվ մեկուսացված շրջաններ: Այստեղի բնակլիմայական նպաստավոր պայմանները տեղաբնակներին հնարավորություն էին ընձեռում շարունակելու իրենց որսորդական ու հավաքչական կենցաղը: Կենդանիների ընտելացման փորձերը բխել են սննդի մշտական պաշարներ հայթայթելու անհրաժեշտությունից, ինչ-որ չափով նաև՝ հետաքրքրասիրությունից: Հայաստանի շատ շրջաններում որսորդ-հավաքչական տնտեսությունը շարունակում էր գերակշռել նոր քարի դարի գրեթե ողջ ժամանակաշրջանում: Լանդշաֆտի բազմազանությունը պայմանավորում էր համայնքների տեղաշարժը, որն էլ, իր հերթին, խթանում էր տարածաշրջանային փոխազդեցությունները:

Մեկ այլ կարևոր հանգամանք՝ վանակատի բացառիկ հարուստ հանքերի առկայությունը Հայկական բարձրավանդակում կանխորոշել է Հայաստանի նոր քարի դարի մշակույթը: Արտենի, Հատիս, Նեմրութ լեռների, Որոտան գետի ավազանի և այլ հանքերի վանակատը բազմաթիվ ճանապարհներով և մեծ քանակությամբ արտահանվում էր ու փոխանակվում ողջ հարավ-արևմտյան Ասիայում: Այս քարատեսակն օգտագործվում էր մեծաքանակ արտեֆակտների՝ գյուղատնտեսական գործիքներից մինչև ծիսական նշանակության իրերի և զարդերի արտադրության համար: Մեծ պահանջարկ

NEOLITHIC AND CHALCOLITHIC (AENEOLITHIC) PERIODS IN ARMENIA

After the melting of ice sheets of the Earth's last glacial age about 12,000 years ago, the rise of human civilization began in southwestern Asia. Along the coast of the Eastern Mediterranean, i.e. in the Levant, and in the foothills of the southern slopes of the Eastern Taurus Mountains along the northern edge of Mesopotamia (modern southeastern Turkey), bands of hunters-gatherers built their first permanent settlements in areas especially rich in wild plants and game. Within a millennium or so they started experimenting with the domestication of plants and wild animals during the period conventionally known as the New Stone Age, or the Neolithic. The natural environment to the north of the Eastern Taurus Mountains was quite different. Here, all the way to the mountain chain of the Greater Caucasus that separates the Near East from the European steppes of what is now southern Russia, the terrain is fragmented by chains of high mountains and characterized by sharp fluctuations in altitudinal zonality. This is the Armenian Highland with multiple isolated niches inhabited by communities that had ample opportunities to continue their hunter-gatherer lifeways, but also to experiment with domestication, driven by necessity or curiosity. Hunter-gatherer economy in such an environment still dominated some regions of Armenia throughout most of the Neolithic. Altitudinal zonality had stimulated mobility of communities, which, in turn, would have intensified different kinds of intraregional interactions. Another important factor characterizing the Neolithic of Armenia was an exceptional richness of its highlands in obsidian sources. Obsidian from Mounts Arteni, Hatis, Nemrut, the Vorotan cluster and other sources was transmitted over different routes of exchange all over southwestern Asia and was used to manufacture broad arrays of artifacts, from agricultural tools to ritual paraphernalia and ornaments. The control and exchange of valuable natural resources led to differentiation in wealth and power between communities and larger social units. This resulted in the formation of larger settlements in the most environmentally beneficial areas. Clusters of such settlements, appearing around 6000 years BC, on the bottom of the Ararat Plain are explored by international archaeological projects along the left tributaries of Arax River at the sites of Aratashen, Masis-Blur, and Aknashen. These Late Neolithic villages consisted of densely built agglomerations of houses and other structures that had predominantly round or elliptic ground plans with walls built of packed



0 1 2 3



Առատաշեն, ոսկրե տեղ և քարե կացիներ, Ք.ա. VI հազ.

Մասիսի-բլուր, կացիկ, Ք.ա. VI հազ.

Անի Պեմզա, միջուկ, Ք.ա. VI հազ.

Aratashen, bone javelin and stone axes, 6th mill. BC

Masis-Blur, a small axe, 6th mill. BC

Ani Pemza, nucleus, 6th mill. BC





վայելող վանակատի հանքերի շահագործումն առաջ բերեց հարստության կուտակում և տնտեսական շերտավորում համայնքների, ապա՝ սոցիալական ավելի խոշոր միավորների միջև: Սա, իր հերթին, հանգեցրեց խոշոր բնակավայրերի կազմավորմանը՝ բնակության համար շահեկան տարածքներում: Շուրջ Ք.ա. 6000 թ. բնակավայրերի խմբեր ձևավորվեցին Արարատյան դաշտում, Արաքս գետի ձախափնյա վտակների մերձակայքում: Դրանցից են Առատաշեն, Մասիս բլուր և Ակնաշեն հուշարձանները, որոնք հետագուովել են միջազգային հնագիտական ծրագրերի շրջանակներում:

Ուշ նեոլիթյան այս գյուղակները բաղկացած են եղել խիտ կառուցված տների և այլ շինությունների կուտակումներից: Կավածեփ կամ հում աղյուսից կառուցված շինությունների գերակշռող մասն ուներ կլոր կամ ձվաձև հատակագիծ: Բնակիչները մշակում էին մի քանի տեսակի ցորեն, գարի և ոսպ, պահում էին ոչխար, այծ և խոշոր եղջերավոր անասուններ, զբաղվում էին որսորդությամբ ու ձկնորսությամբ:

Այս բնակավայրերում հայտնաբերվել են վանակատից, գետաքարից, ոսկրից, եղջյուրներից և խեցուց հմտորեն պատրաստված մեծաքանակ արտեֆակտեր: Գործիքների օգտագործումը փայտի և մորթու մշակման, կաշվից հագուստ կարելու համար ապացույց են, որ Ք. ա. VI հազարամյակում Հայաստանի բնակիչները հմտացել էին օրգանական նյութերի մշակման բնագավառում և այն հասցրել զարգացման բարձր մակարդակի:

Հայաստանի ուշ նոր քարի դարի տնտեսական կյանքում ներդրվեց երկու նոր կարևոր արտադրություն՝ խեցեգործությունը և պղնձահանքերի շահագործումը: Վերջինը մետաղի մշակման բնագավառում մարդկության առաջին քայլերից էր: Նշված բնակավայրերի՝ Ք. ա. VI հազարամյակի առաջին կեսի խեցեղենի հավաքածուներում գերակայում է տեղական կոպիտ արտադրանքը: Այստեղ հայտնաբերվել են նաև բարձրորակ, գունազարդ անոթներ, որոնք դասվում են հալաֆյան ոճին և, հավանաբար, ներմուծվել են Հյուսիսային Միջագետքից: Զարդերը, հիմնականում ուլունքները, պատրաստված են նաև պղնձից, և մեզ հայտնի մետաղե առաջին արտեֆակտերն են:

Պղնձե ուլունքների և նրբաճաշակ կավամանների արտադրությունը պայմանավորեց հեռագնա առևտրի մի նոր տեսակի զարգացումը: Այժմ մասնագիտացված արհեստագործական կենտրոնները դարձան նույնքան կարևոր, որքան հումք մատակարարող շրջանները: Համայնքների միջև հեռահար առնչությունների կայունացումը հարավ-արևմտյան Ասիայի և հարավ-արևելյան Եվրոպայի միջև հաջորդ՝ պղնձեքարեդարյան (խակոլիթյան) ժամանակաշրջանի ամենանշանավոր երևույթներից է:

Խակոլիթյան ժամանակաշրջանը, որը հայտնի է նաև էնեոլիթյան



Մասիս-բլուր, պեղված կացարաններ, Ք.ա. VI հազ.

Մասիս-բլուր, հատված պեղավայրից, Ք.ա. VI հազ.

Masis-Blur, excavated dwellings, 6th mill. BC

Masis-Blur, view of the site, 6th mill. BC

clay or unbaked mudbricks. Their inhabitants cultivated several species of wheat, barley, and lentils, herded sheep, goats, and some cattle, and actively engaged in hunting and fishing. Skillfully made artifacts of obsidian, groundstone, bone, antler, and shell are found at the mentioned settlements in large quantities. Tools used in woodworking, skin processing, and leather tailoring leave little doubt that during the sixth millennium BC the inhabitants of Armenia had achieved a substantial level of sophistication in the crafts related to processing organic materials. The two most important innovations introduced during the Late Neolithic of Armenia were pottery making and the beginning of the manipulation of copper ores, which was the first metal used by humankind. Locally made coarse wares dominate the ceramic production at these settlements but a few high-quality painted vessels, attributed to the Halaf-style manufacturing of Northern Mesopotamia, are found in the same contexts of the first half of the sixth millennium BC. The first copper artifacts are represented by ornaments, mostly by beads. The appearance of both – copper artifacts and fine ceramic tableware – ushered the beginning of a new kind of long-distance trade, one in which centers of specialized craft production had become as important as areas supplying raw materials. This strengthening of long-distance interactions across southwestern Asia and southeastern Europe was one of the most salient features of the subsequent period of the Chalcolithic.

The Chalcolithic Period (also known as the Aeneolithic or the Copper Age) began in southwestern Asia between 5500 and 5200 BC and lasted for about two millennia, until 3500-3400 BC. It was characterized by the spread of copper metallurgy and exchange, however, stone tools still played a dominant role in the economy. During the last four decades, a substantial number of Chalcolithic sites have been identified across the territory of modern Armenia. Four of those – Adablur and Teghut in the Ararat Plain, Areni-1 in the Vayots-Dzor Province, and Godedzor in Syunik – have been explored to some extent. All four represent the second half of the Chalcolithic, dating approximately between 4500 and 3400 BC. Remarkably, each of the four represents a different type of site. Teghut was a small village composed of semi-subterranean round huts, possibly inhabited by semi-nomadic pastoralists who, nevertheless, used high-quality pottery imported from other sites, as were copper implements. Adablur was a substantially larger settlement occupied by large, multi-room architectural complexes aligned along a street, in which remains of artisan workshops and fragments of large clay sculptures were discovered. Located in the canyon of the Arpa River, the Areni-1 cave complex was occupied during that same period for ritual purposes related to mortuary activities. The dry environment of




Առատաշեն, պեղված կացարաններ, Ք.ա. VI հազ.

Գողենձոր, գունազարդ խեցատներ, Ք.ա. IV հազ. առաջին կես

Aratashen, excavated dwellings, 6th mill. BC

Godedzor, painted sherds, 1st half of the 4th mill. BC



Արենի-1 քարայրային համալիր, գունազարդ ձյունասափոր, մոտ Ք.ա. 3900 թ.

Areni-1 cave complex, painted funerary urn, ca 3900 BC

Արենի-1 քարայրային համալիր, հնձաններ և կավակերտ արարած արարած կառուցվածքներ, մոտ Ք.ա. 4000 թ.

Areni-1 cave complex, wine-press and ritual clay structures, ca 4000 BC

Գոդեձոր, գունազարդ սփոր, Ք.ա. 3600-3400 թթ.

Godedzor, painted vessel, 3600-3400 BC


կամ պղնձեքարի դարաշրջան անվանումներով, հարավ-արևմուտյան Ասիայում սկսվել է Ք.ա. 5500-5200 թվերին և հարատևել է շուրջ երկու հազարամյակ՝ մինչև Ք.ա. 3500/3400 թթ.: Այն բնորոշվում է պղնձագործության զարգացմամբ և դրա արտահանմամբ: Այնուամենայնիվ, տնտեսության մեջ քարե գործիքները դեռևս շարունակում էին գերիշխել: Վերջին չորս տասնամյակներում խակոլիթյան մեծաթիվ բնակավայրեր են բացահայտվել ժամանակակից Հայաստանի ողջ տարածքում: Դրանցից չորսը՝ Ադաբլուրը և Թեղուտն Արարատյան դաշտում, Արենի-1-ը՝ Վայոց Ձորում, Գոդեձորը՝ Սյունիքում, մասնակիորեն պեղվել են: Սրանք բոլորն էլ պատկանում են խակոլիթի երկրորդ կեսին և թվագրվում են Ք.ա. 4500-3400 թթ.: Հատկանշական է, որ դրանցից յուրաքանչյուրի մշակույթը տարբեր է մյուսներից:

Թեղուտը կիսաքոչվոր հովիվների փոքրիկ գյուղակ էր՝ բաղկացած կիսագետնափոր, կլոր հատակագծով խրճիթներից: Նրանք օգտագործում էին բարձրորակ կավամաններ, ինչպես նաև պղնձե գործիքներ՝ ներկրված այլ վայրերից: Ադաբլուրն ակնհայտորեն ավելի մեծ էր: Բնակատեղին բաղկացած էր ընդարձակ, բազմասենյակ համալիրներից, որոնք ձգվում էին փողոցների երկայնքով: Այստեղ հայտնաբերվել են արհեստանոցների և կավե քանդակների մնացորդներ:


Արփա գետի կիրճի Արենի-1 քարանձավային համալիրն օգտագործվել է թաղման հետ առնչվող ծիսական նպատակներով: Քարանձավի չոր միջավայրը և կայուն ջերմաստիճանը ձևավորել են հիանալի պայմաններ՝ օրգանական նյութերի պահպանման համար: Հացահատիկը, մրգերը, կտորը, կաշին և նույնիսկ խոտը, որոնք սովորաբար չեն պահպանվում այլ հնավայրերում, մեզ տանում են արտեֆակտների մի զարմանալի աշխարհ, որն ստեղծվել է խակոլիթյան ժամանակաշրջանում: Եզակի են քարանձավի խորքում հայտնաբերված՝ աշխարհում մինչ այժմ հայտնի գինու ամենահին հնձանը, որը թվագրվում է Ք. ա. 4000 թ., և տրեխը՝ Ք. ա. 3600 թ.:

Գոդեձորը բարձր լեռնային, ալպիական արոտավայրերի միջավայրում է: Այն կարևոր անցակետ ու փոխանակման կենտրոն էր շարժուն հովիվների համար: Այստեղ վերաբաշխվում էր հետիոտնի երկու-երեք օրվա ճանապարհի հեռավորությամբ հանքավայրերից բերված վանակատը: Կավի վրայի կնիքների դաջվածքները վկայում են մասնավոր, շատ հավանական է՝ ընտանեկան ունեցվածքի նշագրման ավանդույթի մասին:

Այս հնավայրերի պեղումները բացահայտում են հին Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը խակոլիթյան ժամանակաշրջանում, որը խթանվել է բազմաթիվ տեխնոլոգիական հայտնագործություններով և նորարարություններով, ինչպես նաև միջամաքային փոխառնություններով, որոնք Ք. ա. VI-IV հազարամյակներում հաստատվել էին Մերձավոր Արևելքում:



the cave, together with a stable temperature, provided excellent conditions for the preservation of organic materials. Desiccated grains, fruits, textiles, leather, and even grass, which usually are not found at other sites, open a window onto an unknown world of perishable artifacts produced and used by Chalcolithic civilizations. Especially noteworthy is the discovery, deep in the cave, of the world's oldest presently known wine pressing installation, dating back to around 4000 BC, and of the world's oldest leather shoe, dated approximately to 3600 BC. Godedzor, located high in the mountains at the edge of Alpine summer pastures, was an important transit hub for mobile pastoralists and a center of exchange that also redistributed obsidian brought from the major deposits located at a distance of one to three walking days. Seal impressions on clay sealings found at Godedzor indicate an existence of some kind of private, most likely familial, property. Excavations at these sites clearly reveal the rise of social complexity in Armenia during the Chalcolithic, accelerated by multiple technological discoveries and innovations, and transcontinental connections established across the Near East six thousand years ago.




Արենի-1 քարայրային համալիրի ընդհանուր տեսքը հյուսիսից

Արենի-1 քարայրային համալիր, տրեխ, Ք.ա. 3600 թ.

General View of Areni-1 cave complex from north

Areni-1 cave complex, shoe, 3600 BC



Սևկեհատ, ժայռապատկերներ, Ք.ա. V-III հազ.

Voskehat, rock-engraving, 5th-3rd mill. BC

Սյունիք, ժայռապատկերներ, Ք.ա. V-III հազ.

Ukhtasar, rock-engraving, 5th-3rd mill. BC


Մեզոլիթյան ժամանակաշրջանում Ք. ա. XII-VIII հազարամյակներում, Եվրասիական վիթխարի մայրցամաքի տարբեր շրջաններում ծագեց ժայռապատկերային արվեստը: Հնագույն ստեղծագործողների համար քարը դարձավ մի ինքնատիպ «կտավ»: Ժայռաքերերների և քարաժայռերի, հրաբխային ուռնքերի և լավաների հոսքերի արևայրուքով պատված քարերի հարթ մակերեսներին փորագրվում, փորագծվում և քանդակվում էին երկրաչափական ու բուսական զարդեր, մարդկանց, կենդանիների, թռչունների ու սողունների ֆիգուրներ, զենքեր, կենցաղային իրեր, նավակներ, լաստեր, սայլեր ու մարտակառքեր, դիցաբանական, մարտի ու որսի տեսարաններ:

Հայաստանի ժայռապատկերները քանակով, տեսականիով, ոճով ու բովանդակությամբ բացառիկ են Հին Արևելքի մշակութային համատեքստում: Հայկական լեռնաշխարհում առ այսօր վկայված է ավելի քան 100 000 ժայռապատկեր, որոնք առանձնակի խտությամբ կենտրոնացված են Հայաստանի Հանրապետության Սյունիքի (Ուխտասար), Վայքի (Ջերմուկի լեռներ), Գեղարքունիքի (Աժդահակ), Կոտայքի (Պայտասար, Զառ), Արագածոտնի (Ոսկեհատ, Արագած լեռ, Կաքավաքերդ) և այլ մարզերում: Ժայռապատկերները հիմնականում տարածված են բարձր լեռնային շրջաններում՝ ծ.մ. 2000-3000 մ բարձրությամբ վայրերում, սակայն առկա են նաև նախալեռնային և հովտային՝ ծ.մ. 1000-2000 մ բարձրությամբ շրջաններում:

Արվեստաբանական և հնագիտական վերլուծությունները հիմք են եզրակացնելու, որ Հայկական լեռնաշխարհում ժայռապատկերային արվեստն սկզբնավորվել է մեզոլիթ-նեոլիթյան ժամանակաշրջանում և հարատևել մինչև միջնադար՝ բացառիկ ծաղկում ապրելով բրոնզի դարում: Ժայռապատկերներում արտացոլված են ինչպես հիպերբոլիկ, այնպես էլ իրական, պարզունակ կերպարներ, ստատիկ և դինամիկ դիրքով ֆիգուրներ, անհատական և թեմատիկ սյուժեներ, որոնցում արտացոլված են մարդու գործունեության և աշխարհընկալումների բոլոր կարևոր ոլորտները:

Ըստ թեմատիկայի՝ դրանք կարելի է ստորաբաժանել.

1. Որսի ու ռազմի տեսարաններ:
2. Անասնապահական (ընտելացում, վարժեցում) և երկրագործական (վար) տեսարաններ:



Սև սար, ժայռապատկեր, Ք.ա. V-III հազ.

Sev Sar, rock-engraving, 5th-3rd mill. BC


During the Middle Stone Age (Mesolithic, 12,000-8,000 BC), a new area of artistic activity emerged in various regions of the vast Eurasian continent – the art of petroglyphs. Rock became “canvas” for the prehistoric artists. On the flat and sunburned surfaces of rocks and boulders, and on the volcanic bombs and stones of petrified lava “rivers,” geometric and floral decorations, anthropomorphic, zoomorphic images of birds and reptiles, weapons and household objects, boats and rafts, carriages and chariots, mythical, battle, and hunting scenes were engraved. The dates of specific groups of petroglyphs are difficult to ascertain.

The Armenian petroglyphs are exceptional in the context of prehistoric Near East culture by their number, variety, style, and content. There are over 100,000 petroglyphs known in the Armenian Highland, more densely located in Syunik – Ukhtasar, Vayk – Jermuk mountains, Gegharkunik – Azhdahak, Kotayk – Paytasar and Zar, Aragatsotn – Voskehat, Mt. Aragats, Kakavaberd and other regions of the Republic of Armenia. The petroglyphs are mainly spread in high mountainous areas, at 2000-3000 meters above sea level, although there are also examples found at lower altitudes, between 1000 and 2000 meters above sea level.

The art-historical and archeological analysis suggests a chronology of rock art emerging in the Armenian Highland around the Mesolithic-Neolithic periods and lasting to the Middle Ages, reaching its apogee in the Bronze Age. The petroglyphs depict both highly symbolized and primitive naturalistic images, figures in static and dynamic poses, individual and thematic compositions encompassing all the important spheres of human activity and perceptions of the universe.

Thematically, they can be divided as follows:

1. Hunting and battle scenes.
2. Cattle-breeding (domestication and taming) and agricultural (plowing) scenes.
3. Ritual activities, sport and dancing scenes.
4. Images of the ancestors, deities and heroes, good and evil spirits. Among them, the image of the thunderbolt-wielding god is recognizable.
5. Animal images – goat, bull, deer, leopard, auroch, bison, antelope, horse, dog, wolf, fox, boar, bear, snakes, swimming birds.
6. Mythical creatures – dragons, beasts, fairy images.
7. Images of trees, flowers, and fruits.
8. Images depicting maternity, sacred marriage, fertility and the



էջ 27

Ուխտասար, ժայռապատկերներ, Ք.ա. V-III հազ.

Ջառ, կուռք՝ ժայռապատկերների միջակայքում, Ք.ա. V-III հազ.

Ջառ, ժայռապատկեր, Ք.ա. V-III հազ.

Սև սար, ժայռապատկեր, Ք.ա. V-III հազ.

Սաղե լեռ, ժայռապատկեր, Ք.ա. V-III հազ.

page 27

Ukhtasar, rock-engravings, 5th-3rd mill. BC

Idol amid the rock-engravings, 5th-3rd mill. BC

Zar, rock-engraving, 5th-3rd mill. BC

Sev Sar, rock-engraving, 5th-3rd mill. BC

Sartse Ler, rock-engraving, 5th-3rd mill. BC

3. Ծիսական արարողություններ, մարզական ու պարի տեսարաններ:

4. Նախնիների, աստվածությունների, դիցաբանական հերոսների, բարի ոգիների պատկերներ: Սրանցում առանձնանում է կայծակնացայտ աստվածության կերպարը:

5. Կենդանիների պատկերներ՝ այծ, ցուլ, եղջերու, հովազ, տուր, գուրր, վիթ, ձի, շուն, գայլ, աղվես, վարազ, արջ, օձեր, ջրլող թռչուններ:

6. Առասպելական արարածներ՝ վիշապներ, հրեշներ, հեքիաթային էակներ:

7. Ծառ ու ծաղկի, պտուղների պատկերներ:

8. Մայրության, սրբազան բեղմնավորման, պտղաբերության ու ժամանակի պաշտամունքն արտացոլող պատկերներ: Ուշագրավ է նախամոր կերպարը, որը համահունչ է շումերական առասպելի Նամմու նախամոր կերպարին:

9. Փոխադրամիջոցներ (սայլ, նավակ, սահնակ) և կառուցվածքներ (ոռոգման ցանցեր, թակարդներ, արգելապատնեշներ, խորհրդավոր կառույցների հատակագծեր):

10. Զենքեր, գործիքներ և հարմարանքներ՝ նիզակ, կապարճ, գուրգ, մահակ, վահան, կեռիկ, արոր, օղապարան, ցանց, ոտկան:


11. Շրջակա միջավայրի անշարժ տարրեր. սակավ են՝ լեռ, գետ, լիճ, աղբյուր պատերները: Գերակշռում են բնության երևույթների պատկերները՝ կայծակ, անձրև, ծիածան:

12. Կան տարատեսակ նշաններ, գաղափարագրեր ու խորհրդանշաններ, որոնք հիշեցնում են *պիկտոգրամաններ*, ինչպես նաև հնագույն ստաեր:

13. Ժայռապատկերների մի խումբ ստեղծվել է ժամանակի ու տարածության մեջ կողմնորոշման նպատակով՝ օրացույց, տեղանքի ու երկնականարի քարտեզներ:

14. Մեծաթիվ են *սոլյար* նշանները: Առանձնանում է տիեզերքի, մասնավորապես Կաթնածիր համաստեղությունը պատկերող ժայռաքանդակը, որը եզակի երևույթ է:

Ժայռապատկերների գերկենտրոնացումը վկայում է, որ Հայկական լեռնաշխարհը ժայռափորագրման հնագույն օջախներից է: Հայոց մեջ ժայռափորագրման ավանդույթները հարատևել են ու պահպանվել են հազարամյակներ, ինչը վկայում է այս ոլորտի տևականության և անընդհատության մասին:



worship of time. The image of the Great Mother Goddess is of special interest.

9. Transportation means (carriages, boats, sleighs) and structures (irrigation nets, traps, guarding walls, plans of buildings).

10. Weapons, tools, and other devices – spear, quiver, mace, bludgeon, shield, hook, plow, lasso, and fishing net.

11. Elements of still nature such as mountains, rivers, lakes and springs are rare, while the natural phenomena such as lightning, rain, and rainbows dominate.

12. There are various symbols, resembling pictograms and signs like archaic characters.

13. Certain groups of petroglyphs depict signs related to orientation in time and space, similar to calendars, or landscape and sky maps.

14. Solar symbols are also numerous. Among celestial bodies petroglyphs representing images of the Universe and the Milky Way in particular are most notable.

The exceptional concentration of petroglyphs testifies that the Armenian Highland was one of the ancient centers of rock art. Traditions of rock engraving were preserved and lasted during millennia, which suggests that this practice was long lasting, continuous, and evolving.



Շենգավիթ, կենտրոնական պեղավայրի տեսքն օդապարուկից, Ք.ա. XXIX-XXV դդ.

Shengavit, General view of the central operation from a kite, 29th-25th cc. BC

Շենգավիթ, տաճար, Ք.ա. XXVII-XXV դդ.

Shengavit, temple, 27th-25th cc. BC

Ք.ա. IV հազարամյակի կեսին Հայաստանում ձևավորվում է բացառիկ ինքնատիպ և հզոր մի մշակույթ, որը գոյատևում է ավելի քան մեկ հազարամյակ և, զարգանալով, ընդգրկում է հսկայական տարածքներ՝ Հյուսիսային Կովկասից մինչև Իսրայել, Արևելյան Անատոլիայից (Ամիդ) մինչև Կենտրոնական Իրան (Գոդին-թեփե)՝ առանցքում ունենալով Հայկական լեռնաշխարհը, մասնավորապես Արարատյան դաշտը և սրան մերձակա նախալեռնային գոտին: Ժամանակակից 12 պետությունների տարածքներում հավաստված այս մշակույթը գիտական աշխարհին հայտնի է տարբեր անուններով: Գրանցից առավել տարածված են Կուր-Արաքսյան և Շենգավիթյան անվանումները: Այս մշակույթը բնորոշվում է երկրագործական նստակյաց տնտեսությամբ, որի հարյուրավոր բնակավայրերը խիտ ցանցով ծածկում են Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածքների արգավանդ գետահովիտները, բաձրադիր սարահարթերը և բարձր լեռնային գոտիները: Վաղ բրոնզի դարի արհեստական բյուր-բնակավայրերին հատուկ են մեծ հզորությամբ մշակութային շերտերը, որոնք որոշ վայրերում հասնում են 12 և ավելի մետրերի (Այգևան, Մոխրաբլուր, Նորշուն-թեփե):

Մշակույթին բնորոշ է հում աղյուսե ճարտարապետությունը: Հարդախառն և ավազախառն կավից, կաղապարների միջոցով պատրաստված և արևի տակ չորացված հում աղյուսն այն հիմնական շինանյութն էր, որից կերտում էին պարիսպներ, տաճարներ, բնակելի և տնտեսական շինություններ, հիդրոինժեներական կառույցներ և այլն: Տների հիմքերը շարում էին գետաքարերից, ճեղքված կամ անմշակ բազալտից (Շենգավիթ, Հատիճ, Կարագ, Ամիրանիս-գորա և այլն): Տարածված էին կլոր՝ 4-10 մ տրամագծով և ուղղանկյուն հատակագծով շինությունները: Վերջիններն ունեին հարթ, գերանակապ տանիք, իսկ կլոր հատակագծով շինությունները՝ ա/ կեղծ թաղակապ շինվածք՝ կենտրոնում երդիկ, որը լուծում էր տան լուսավորության և օդափոխության խնդիրները: Բ/ գլանաձև պատեր, որոնք կրում էին պարզունակ, «հազարաշենն տիպի, եղեգսի» կավածեփի շերտով պատված տանիքներ (Շենգավիթ, Մոխրաբլուր): Հատակները տոփանված հողից էին: Կային նաև կավասվաղ, մինչև 10 սմ հաստությամբ (Շենգավիթ) և կարմիր ներկած (Ղարաքեփեկ-թեփե) հատակներ: Գրանցվել են կավակերտ պատերը դեկորատիվ հարդարմամբ աշխուժացնելու ու տարբեր գույնի աղյուսների ձևավոր շարվածքով շինությունը զարդարելու և գունախաղով պատի միապաղաղ տեսքն աշխուժացնելու օրինակներ (Շենգավիթ, Նախիջևանի Մոխրաբլուր, Յանիկ-թեփե և այլն):



Մոխրաբլուր, կնոջ արձանիկ, Ք.ա. XXIX-XXVII դդ.

Շենգավիթ, աղյուծի արձանիկ, Ք.ա. XXVII-XXV դդ.

Շենգավիթ, տղամարդու արձանիկ, Ք.ա. XXVII-XXV դդ.

Շենգավիթ, սև փայլեցրած կարաս, Ք.ա. XXIX-XXVII դդ.

Mokhrablur, female figurine, 29th-27th cc. BC

Shengavit, figurine of a lion, 27th-25th cc. BC

Shengavit, male figurine, 27th-25th cc. BC

Shengavit, black-polished karas, 29th-27th cc. BC



During the mid fourth millennium BC, a uniquely specific and powerful civilization which lasted over a millennium emerged and developed in Armenia, encompassing a vast territory from the Northern Caucasus to Israel, from Eastern Anatolia (Amid) to Central Iran (Godin Tepe), with the Armenian Highland, especially the Ararat Plain with its surrounding foothills, as one of its core regions. This civilization was uncovered in as many as 12 modern countries and is known to the scientific world under various names, of which Kura-Arax and Shengavit denominations are the most widespread. It is characterized by an agricultural economy and thousands of settlements densely covering fertile river basins, foothills, and even the high mountainous zones of the Armenian Highland and neighboring regions. The artificial hill-settlements of the Early Bronze Age in the plains are characterized by multiple architectural layers, forming deposits as many as 12 meters deep or more as in the case of Aygevan in the Ararat plain.

Mud-brick architecture is typical for this civilization. Made in wooden molds out of clay mixed with straw and sand, and dried under the sun, unbaked mud-bricks were the principal building material for fortress walls, ritual buildings, houses, hydro-engineering constructions, etc. In some cases, foundation walls were first laid with cobbles and boulders (Shengavit, Harich, Karaz, Amiranis-Gora, etc.). Both round (4-10 meters in diameter) and rectangular structures were built. The rectangular houses had flat timber ceilings, while the round ones had a corbelled roof construction with an opening in the center, similar to the Armenian ethnographic *yerdik*, which solved the issues of lighting and air-circulation of the dwelling. The cylindrical walls were covered with a primitive version of the *hazarashen* construction technique (dome-shaped ceiling made of timber). Roofs were constructed with timber and twigs, covered with a layer of reeds, and finally plastered with clay (Shengavit, Mokhrablur). Floors were made of packed earth or were plastered, up to 10 cm thick at Shengavit and red-colored at Gharakepek-Tepe in the Arax River basin. Bricks of different colors (yellow and dark grey) were laid in chessboard patterns in order to give an aesthetic quality to the walls of houses (Mokhrablur, Shengavit, Nakhijevan Kyul-Tepe, Yanik-Tepe, etc.).

Inside cultic buildings terra-cotta hearths were built in front of altars, which was typical and exceptional to the Shengavit culture. They are close to one meter in diameter and 20 cm high. The interior of the



Շենգավիթ, տաճարի ատրուշանը և բազիլը, Ք.ա. XXVII-XXV դդ.



Շենգավիթ, կրծքագարդ, Ք.ա. XXVII-XXV դդ.



Գյումրի, կախկրթառ կացին, Ք.ա. XXVII-XXV դդ.



Վարդաշեն, Մերձերևանյան գանձ, կտցավոր կացին, Ք.ա. IV-III հազ.



Վարդաշեն, Մերձերևանյան գանձ, կացին, Ք.ա. IV-III հազ.



Վանաձորի երկրագիտական թանգարան, խոյազլուխ շքասեղ, Ք.ա. XXVII-XXV դդ.



Shengavit, hearth of a temple, 27th-25th cc. BC



Shengavit, pectoral, 27th-25th cc. BC

Gyumri, axe, 27th-25th cc. BC

Vardashen, Yerevan-suburb hoard, beak-shaped axe, 4th-3rd mil. BC

Vardashen, Yerevan-suburb hoard, axe, 4th-3rd mill. BC

Regional Museum of Vanadzor, ram-headed pin, 27th-25th cc. BC

Պաշտամունքային կառույցների ներսում, բազիլների առջև, զուտ շենգավիթյան մշակույթին բնորոշ, մինչև մեկ մետր տրամագծով, ներքին տարածքը միջնապատ-հաստացումներով երեք մասի բաժանված և երկրաչափական պատկերներով զարդարված թրծակավե կրակարաններ էին: Սրանց մոտ հայտնաբերվել են կանանց և տղամարդկանց, ինչպես նաև պաշտվող կենդանիների՝ ձիերի, շների, ցլերի և խոյերի արձանիկներ:

1-10 հա տարածքով բնակավայրերը շրջապատված էին քարից (Շենգավիթ, Գանսի, Փերսի, Խորենիա՝ Ջավախք) և հուս աղյուսից (Մոխրաբլուր, Գոյ-թեփե, Գուդաբերտեկե) կառուցված պարիսպներով, արհեստական ջրափոսերով (Նորաբաց, Կվացխեղերի, Խիզանաթ-գորա): Կենտրոնական քաղաքատեղիները, որոնց բնորոշ էր խիտ կառուցապատումը (Շենգավիթ, Մոխրաբլուր և այլն), շրջապատված էին արբայնակ-բնակատեղիներով:

Շենգավիթյան մշակույթը կրողներն ունեցել են կրոնական բարդ համակարգ: Մոխրաբլուր բնակավայրի կենտրոնական մասում, III-V շինարարական հորիզոններում բացվել է ծավալատարածական մի հորինվածք՝ կարծր տուֆից շարված, ուղղանկյուն հատակագծով «աշտարակ» (7,4x5,5, բարձրությունը՝ 6 մ), որի արևելյան մասում դրված էր 4,0 մ երկարությամբ միակտոր բազալտից զոհասեղանը: Քարակերտ կառույցին կից բացվել են կավակերտ շինություններ, մոխրափոսեր, որոնց մեջ կուտակել էին սրբազան կրակարանների մոխիրը: Շենգավիթ քաղաքատեղիում հայտնաբերվել են տուֆե բազմաթիվ կուտքեր, թրծակավե օջախ-կրակարաններ: 2012 թ. պեղվեց պաշտամունքային մի բարդ համակարգ՝ հատուկ ծիսական արարողությունների համար նախատեսված ուղղանկյուն հատակագծով սենյակ, որի ներսում բացվեց ճակատը ռելիեֆ քանդակներով զարդարված կավակերտ բազիլ: Սրա վրա ամրացված է եղել կուտքի փայտե արձանը: Դիմացը թրծակավե ատրուշան-կրակարանն էր, որի մոտ ընկած էր հեղումների գավաթը, իսկ նստարանի վրա՝ եղջերվի եղջյուրից զոհաբերության գործիքը: Կիսագետնավոր սենյակ տանող աստիճաններից աջ կավակերտ ավազաններ էին, որոնց մեջ հավաքել էին սրբազան կրակի մոխիրը: Տաճարում հայտնաբերվեց ֆալլաձև կախիկ-հնայիլ, որը, թերևս, քրմուհու տարբերակիչ նշանն էր: Համալիրի մյուս սենյակն ուներ տնտեսական բնույթ: Պաշտամունքային համանման մի կառույց պեղվել է Պուլոր հնավայրում:

Վաղ քաղաքատիպ բնակավայրերը, տաճարները, պարիսպները, զարգացած արհեստագործությունը՝ մետաղագործություն, քարգործություն, խեցեգործություն, տեքստիլ, գինու և զարեջրի արտադրությունները, տրանսպորտը, կշռի միասնական համակարգը և այլ հատկանիշներ վկայում են շենգավիթյան մշակույթի զարգացման բարձր մակարդակի մասին, որը թևակոխել էր քաղաքակրթության շեմը:



Շենգավիթ, կախիկ-հնայիլ, Ք.ա. XXV-XXIV դդ.

Ագարակ, հղի կնոջ արձանիկ, Ք.ա. XXIX-XXXVII դդ.



Վանաձորի երկրագիտական թանգարան, խեցու բեկոր՝ աղոթող կնոջ հարթաքանդակով, Ք.ա. XXIX-XXXVII դդ.

Ջոհազ, N2 դամբարանը, Ք.ա. XXV դ.

Shengavit, pendant-amulet, 25th-24th cc. BC

Agarak, figurine of a pregnant woman, 29th-27th cc. BC

Regional Museum of Vanadzor, ceramic sherd with a bas-relief image of a praying woman, 29th-27th BC

Joghaz, burial N2, 25th c. BC

hearth typically has a clover shape, and its upper surface is covered with geometric decorations. Human female, male, and animal figurines, including horses, dogs, bulls, and rams, were uncovered close to those hearths.

Occupying areas between 1 and 10 hectares the settlements were surrounded with fortress walls of stone (Shengavit, Garni, Persi, Khorenia – Javakhq) and mud-brick (Mokhrablur, Geoy-Tepe, Gudabertka) as well as with artificial moats (Norabats, Kvatskhelebi, Khizannat-Gora). Densely built central towns (Shengavit, Mokhrablur etc.) were surrounded by satellite settlements.

People of the Shengavit culture had developed a complex religious system. In the central part of the Mokhrablur settlement, an example of ritual monumental architecture was uncovered. It was a 6 meter high rectangular tower built of hard tuff stones with a four meter high vertical basalt stela erected on the platform on top of the tower. Adjacent to the stone foundation of the tower mud-brick structures and ash-pits were uncovered, where the ash from the sacred hearths was gathered. At the site of Shengavit, numerous tufa idols as well as terra-cotta hearths were uncovered. In 2012, a cultic complex was discovered – a rectangular room for special ritual activities, in the center of which, a clay altar decorated with relief ornaments on the front was found. A wooden statue of an idol was affixed into the altar, and goblets for libations were placed in front of the heart. To the right from the stairs leading to the semi-subterranean room of the shrine, two clay-packed basins were found, in which the ashes from the sacred fire were kept. A phallic pendant-idol was found in the shrine, which was probably the identifying symbol of the priestess. The adjacent room of the complex reflects household activities. A similar cultic complex was found at the site of Pulum (Sakyol).

These settlements with features of urbanization, temples, fortress-walls, the advanced crafts of metalworking, lapidary, pottery production, textiles, wine and beer production, transportation, standard system of weights, and other characteristics testify to the high level of development of the Shengavit culture.



Հակոբ Սիմոնյան

Հայաստանը միջին բրոնզի դարում (Ք.ա. 2400-1500 թթ.)




Քարաշամբ,
Մեծ դամբանարդուր,
դրվագագարդ գավաթ,
Ք.ա. XXIII-XXII դդ.

Qarashamb,
The Big Kurgan,
embossed and engraved
goblet, 23rd-22nd cc. BC

Վանաձոր, Արքայական
դամբանարդուր,
գավաթ, XXI-XIX դդ.

Vanadzor, Royal kurgan,
goblet,
21st-19th cc. BC



Հայաստանի սոցիալ-մշակութային, ինչպես նաև քաղաքական կյանքում Ք. ա. III հազարամյակի կեսին տեղի են ունենում խոշոր փոփոխություններ: Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային շրջաններում հաստատվում են վաղ դամբանարդուրների և գունագարդ խեցեղենի մշակույթը կրող հնդեվրոպական ցեղախմբեր: Տնտեսական խոր ճգնաժամ ապրող շենգավթյան սոցիալ-մշակութային ընդհանրությունը փլուզվում է: Եկվոր և տեղաբնիկ տարրերի միաձուլումից ծագում են չորս ազգակից՝ կարմիրբերդյան, սևան-արցախյան, թռեղք-վանաձորյան և կարմիրվանքյան հնագիտական մշակույթները: Դրանք հանդես գալով որպես ազգակից մշակույթների խումբ, զբաղեցնում են Հայկական լեռնաշխարհի գրեթե ողջ տարածքը՝ Ուրմիա, Վանա և Սևանա լճերի ավազանների միջակայքը և հարակից տարածքները, ընդհուպ մինչև Մեծ Կովկասյան լեռնաշղթան: Ի տարբերություն շենգավթյան մշակույթի, միջին բրոնզի դարի տնտեսությունում գերակշռում էր անասնապահությունը: Դրա մասին են վկայում ոչ միայն ոսկրաբանական նյութերը, այլև մեծաքանակ դամբարանադաշտերը, որոնք կազմում են մեզ հայտնի հուշարձանների 70%-ը: Հայաստանում (Ներքին Նավերի դամբարանադաշտ) հավաստվել են ընտելացված ձիերի գոհաբերության վաղագույն օրինակները Հին Արևելյան մշակույթների համտեքստում (Ք.ա. XXIII դ.):

Միջին բրոնզի դարի տնտեսության մեջ կարևոր դեր էին խաղում նաև ռազմական հաջող արշավանքները: Ցեղային առաջնորդների և ավագանու ձեռքերում հսկայական միջոցներ էին կուտակվում, որի հետևանքով արհեստների և արվեստի ծաղկման անսխաղեպ առաջընթաց է արձանագրվում: Հայաստանը ներգրավվում է նոր ձևավորվող միջազգային առևտրի համացանցում, որի մասին են վկայում պերճանքի առարկաների, զենքերի և թանկարժեք մետաղե սպասքի մեծ նմանությունը Առաջավոր Ասիական կենտրոններից հայտնաբերված հնագիտական արտեֆակտների հետ:

Ճարտարապետական ձևերում լայն տարածում են ստանում ուղղանկյուն հատակագծով կառույցները (Ուզերլիկ թեփե, Մեծամոր, Աշտարակի բերդչեն): Դամբարանները նախատեսվում են անհատական թաղումների համար: Ննջեցյալներին հողին էին հանձնում կծկված վերջույթներով. տղամարդկանց՝ աջ, կանանց՝ ձախ կողքի վրա պատկած դիրքով: Վերնախավի մահացած անդամներին դիակիզում էին: Այս ծեսը, ինչպես և խեթական աշխարհում,

Hakob Simonyan

ARMENIA IN THE MIDDLE BRONZE AGE (2400-1500 BC)



Էջմիածին, սուսեր,
Ք.ա. XX-XIX դդ.

Քարաշամբ, Մեծ
դամբանարդուր, մանյակ,
Ք.ա. XXIII-XXII դդ.

Ներքին Նավեր, շքասեղի
գլխիկ, Ք.ա. XX-XIX դդ.

Echmiadzin, long sword,
20th-19th cc. BC

Qarashamb, The Big Kurgan,
necklace, 23rd-22nd cc. BC





Nerqin Naver, pin head,
20th-19th cc. BC

Major changes occurred in the social-cultural and political life of Armenia by the mid 3rd millennium BC. In the central and northern regions of Armenian Highland tribes traditions speaking Indo-European languages and carrying of the early kurgans and painted pottery were settled down. The Shengavit social-cultural community underwent a deep economic crisis and collapsed. As a result of a merger of newcomers with native elements, four kin archaeological cultures emerged, named by archaeologists Karmir-berd, Sevan-Artsakh, Trialeti-Vanadzor and Karmir-Vank cultures. That cluster of related cultures occupied almost the entire Armenian Highland – the territory between the lakes Urmia, Van and Sevan and neighboring areas up to the Great Caucasus ridge. Cattle breeding became predominant in the economy of the Middle Bronze Age, which differentiate it from the Shengavit culture. Faunal remains and also the predominance of cemeteries that form 70% of the known archaeological sites of Armenia suggest a high level of pastoral mobility at that time. In the cemetery of Nerqin Naver in Armenia the earliest (24th-22rd cc. BC) examples of sacrificed horses in the Near East were uncovered.

Military activities played an important role in shaping the Middle Bronze age society and its economy. Vast wealth was accumulated in the hands of social elites due to which an unprecedented development of crafts and art was recorded. Armenia was involved in the network of newly forming international trade which is testified by numerous parallels in ornaments, weapons and precious metal table-wares with the artifacts found from major ancient Near Eastern sites.

Buildings with rectangular plans become widespread (Uzerlik Tepe, Metsamor, Arsharak berdshen) in settlement architecture.

The majority of burials were intended for single inhumations. The deceased were buried in flexed position – males on the right and females on the left side. Deceased members of elite were cremated. This rite was similar to Hittite traditions, which was the privilege of elites and priesthood. The main funeral construction was a burial mound covered with a stone shell and surrounded by a stone circle and rectangular burial chamber sometimes with underneath the mound (kurgan) a rectangular burial chamber, sometimes with rounded corners, was located. The chamber could be an earth pit, rock carved, or a chamber with built stone walls. The diameter of royal burial mounds reaches 50 m, the depth – up to 7 m and the surface of burial chambers up to 150 square meters. The crema-



Ներքին Նավեր,
գունազարդ կավանոթների
դրվագներ՝ ձիերի,
քարայծերի և թռչունների
պատկերներով,
Ք.ա. XIX-XVIII դդ.

Ներքին Նավեր,
գունազարդ սափոր՝ ձիերի
երամակի պատկերով,
Ք.ա. XIX-XVIII դդ.

Ներքին Նավեր,
գունազարդ կավանոթներ,
Ք.ա. XIX-XVIII դդ.

Nerqin Naver, painted
pottery details with images
of horses, ibex and birds,
19th-18th cc. BC

Nerqin Naver, painted jar
with the image of a herd of
horses, 19th-18th cc. BC

Nerqin Naver, painted
pottery, 19th-18th cc. BC


Լջ 35
Վերին Նավեր,
դամբարանադաշտի
կենտրոնական հատվածը,
Ք.ա. XX-XVII դդ.

Ներքին Նավեր, NNI-5
դամբարանների
ընդհանուր տեսքը,
Ք.ա. XXIII-XX դդ

page 35
Verin Naver, central part
of the necropolis,
20th-17th cc. BC

Nerqin Naver,
burial NNI-5 general view,
23rd-20th cc. BC





Վերին Նավեր, Ներքին Գետաշեն, գունազարդ սափորներ, Ք.ա. XIX-XVIII դդ.

Verin Naver, Nerqin Getashen, painted jars, 19th-18th cc. BC

Ներքին Նավեր, սև փայլեցված կարաս, Ք.ա. XXII-XX դդ.

Nerqin Naver, black-polished karas, 22nd-20th cc. BC

ավագանու և քրմերի մենաշնորհն էր: Թաղման հիմնական կառույցը դամբանաբլուրն էր՝ կազմված քարե զրահից, սրա պարագծով շարված կրոմլեխից և կենտրոնական մասում փորված ուղղանկյուն, երբեմն կլորացող անկյուններով հիմնահողային, ժայռափոր կամ քարաշատ պատերով դամբանախցերից: Արաքայական դամբանաթմբերի տրամագիծը հասնում է 50 մ, խորությունը՝ 7 մ, դամբանաքանդակների մակերեսը՝ 150 քմ: Հայաստանի՝ միջին բրոնզի դարի վերնախավի դամբարանների դիակիզման ծեսը, հսկայական չափերը, ճոխ, այդ թվում նաև ոսկյա և արծաթե սպասքը, ներմուծված ընծաները, մարդկային զոհաբերությունները համադրելի են խեթական և միջագետքյան արքայական դամբարաններին: Նման դամբարաններ պեղվել են Թոեղքում, Մարտկոպիում, Ալագանիի հովտում, Ջավախքում, Արուճում, Մայիսյանում, Քարաշամբում, Վանաձորում, Ներքին Նավերում և այլուր:

Բացառիկ է Ջորաց քարեր (Քարահունջ) հուշարձանը Սիսիան քաղաքի մոտ: Շրջանաձև և ուղիղ գծով շարված մենհիրներից բաղկացած քարուղին ձգվում է հարյուրավոր մետրեր: Որոշ գիտնականների կարծիքով՝ այն եղել է հնագույն աստղադիտարան և նման է հոչակավոր Ստոնհենջին:

Հայաստանի՝ միջին բրոնզի դարի մշակութային ժառանգությունը, կիրառական արվեստի և գեղարվեստական մետաղագործության (տորևտիկա) նրբաճաշակ գլուխգործոցները հայ ժողովրդի բազմադարյան ստեղծագործության ամենավաղ էջերից է, երբ ցեղի ստեղծագործ ոգին պտղելու է անասելի ուժգնությամբ՝ կերտելով արվեստի գլուխգործոցներ՝ տոգորված բարբարոսական վեհությամբ (Վանաձորի հերալդիկ դիրքով առյուծների բարձրաքանդակներով և Թոեղքի՝ կրկնակի պատերով, թանկարժեք քարերով ընդելուզված ոսկյա, Քարաշամբի ու Կորուկյաշի արծաթե դրվագազարդ գավաթները, որոնց վրա պատկերված են հնդեվրոպական դիցաբանության հնագույն ասքեր): Բազմազան են զարդերն ու պերճանքի առարկաները՝ շքաներ, սպարանջաններ, մանյակներ, ուլունքներ, ճարմանդներ, հայելիներ և այլն, որոնք պատրաստված են ոսկուց, արծաթից, բրոնզից, կիսաթանկարժեք քարերից (սարդիոն, հասպիս, գիշեր, օսիքս, օբսիդիան և այլն), բազմազան ասպակուց և հախճապակուց: Կիրառական արվեստում առանձնահատուկ է պոլիխրոմ և մոնոխրոմ գունազարդ խեցեղենը, որի զարդանախշն իր գունախաղով և արտահայտչականությամբ ընդհուպ մոտենում է գեղանկարչությանը (Ներքին Նավերի, Թոեղքի և Գետաշենի հիդրիաները, Էլարի, Ապարանի, Արուճի սափորները և այլն): Գեղարվեստական բարձրարժեք նմուշներ են նաև սև փայլեցված, ուղիղ գծով և կետաշար զարդանախշերով անոթները, որոնք գունազարդ խեցեղենի հետ միասին կազմել են սեղանի տոնական սպասքը:



Ներքին Նավեր, սուրեր, Ք.ա. XX-XIX դդ. Nerqin Naver, long sword, 20th-19th cc. BC
 Էջմիածին, գունազարդ սափոր, Ք.ա. XVII-XVI դդ. Echmiadzin, painted jar, 17th-16th BC
 Ներքին Նավեր, ներմուծված գունազարդ գավաթ, Ք.ա. XX-XIX դդ. Nerqin Naver, imported painted goblet, 20th-19th cc. BC
 Ջորաց քարեր, մենաքարեր, Ք.ա. XX-XVIII դդ. Zorats Qarer, menhirs, 20th-18th cc. BC

tion rituals of the Middle Bronze Age elites, huge sizes of burials, splendid wares including gold and silver, imported gifts, and human sacrifices are comparable to Hittite and Mesopotamian royal tombs. Such burials were excavated at Trialeti, Martkopi, Alazani valley, Javakheti, Aruch, Maisian, Karashamb, Vanadzor, Nerqin Naver and elsewhere.

The site of Zorats Karer (also known in mass media as Karahunj) near the city of Sisian is of extreme interest. Monumental stone fences consisting of stelae standing in circles and straight lines extend over hundreds of meters. Certain non-archaeologist scientists suggest that this site was an ancient observatory and compare it to the famous Stonehenge in England.

The Middle Bronze Age cultural heritage with its splendid masterpieces of applied arts and artistic metalwork constitutes is one of the most brilliant pages in the history of Armenian civilization when the creative spirit of the people bursts with immense power giving birth to masterpieces of art full of barbaric splendor (golden goblet with bas-reliefs of lions in heraldic postures from Vanadzor, another from Trialeti with double walls inlaid with precious stones; embossed silver goblets from Karashamb and Koruktash depicting ancient Indo-European mythological themes). The amazing variety of objects of applied arts include pins and bracelets, necklaces, beads, buckles, mirrors etc., made of gold, silver, bronze, semi-precious stones (cornelian, jasper, gagate, onyx, obsidian etc.), multi-colored glass and faience beads. Polychrome and monochrome pottery occupied a distinctive place in artistic production. Its colorful compositions and expressive designs attest to the development of the art of painting (Nerqin Naver, Trialeti and Getashen vases, vessels from Elar, Aparan, Aruch etc.). Black burnished vessels decorated with relief belts and dotted ornaments are valuable artistic examples, which, together with painted pottery made up splendid festive tablewares.





Մեծամոր, վիշապակոթող,
Ք.ա. XVII-XVI դդ.

Metsamor, *vishap* stone stela,
17th-16th cc. BC

Այս ինքնատիպ կոթողները հատուկ են լույս Հայկական լեռնաշխարհի մշակույթին: Վիշապի՝ մինչև 6 մ բարձրությամբ, միակտոր բազալտից կերտված արձանները, որոնց ժողովուրդն անվանել է վիշապներ, տեղադրվել են բնական և արհեստական ջրավազանների ու աղբյուրների ակունքների մոտ և խորհրդանշել են տարերքի անսանձ ուժերը, բնության զարթոնքը, պտղաբերություն, առատություն: Վիշապակոթողներ են դրվել նաև դամբարանների մեջ: Սրանք, հավանաբար, խորհրդանշել են վերածննդի գաղափարը: Ըստ Մ. Աբեղյանի՝ վիշապները նվիրվել են հայկական պանթեոնի սիրո, պտղաբերության և ջրերի աստվածուհուն՝ Աստղիկ (Դերկետո, Աֆրոդիտե) դիցուհուն: Գ. Ղափանցյանի կարծիքով՝ դրանք նարմավորել են հայոց մեռնող և հարություն առնող աստվածուհյանը՝ Արա Գեղեցիկին:

Վիշապակոթողների վաղագույն օրինակներն ունեն ձկնակերպ իրան, լոքո ձկնաը բնորոշ մեծ գլուխ, ռեխեֆ աչքեր, խոխիկներ և լողակներ: Այսպիսի կոթողների փոքի վրա հաճախ պատկերված են զոհաբերված ցլի՝ ոճավորված եղջյուրներով գլուխը, մորթին՝ վերջույթներով: Որպես կանոն՝ ցլերի բերանից ջրի շիթեր են հոսում, ինչը շեշտում է վիշապների առնչությունը ջրի պտղաբեր ուժի հետ:

Քառակող կամ բազմանիստ, երբեմն դեպի վեր լայնացող կոթողները թվագրվում են ավելի ուշ: Սրանց գլխի վրա «գցված» է զոհաբերված ցլի մորթին՝ գլուխը մի կողմում, ետևի վերջույթները և պոչը՝ մյուս կողմում: Սա հեռանկարի վերաբրտադրման հնագույն փորձերից է: Այս կոթողների վրա հանդիպում են նաև թռչունների բարձրաբանդակներ: Նախատեսված են եղել բոլոր կողմերից դիտելու համար՝ խորհրդանշելով պտղաբերության արական սկիզբը: Մինչ այժմ հայտնաբերվել է մի քանի տասնյակ վիշապակոթող Գեղամա լեռներում, Սևանա լճի հյուսիս-արևելյան ափին, Արագած լեռան հարավային լանջին, Ջավախքում՝ Փարվանա լճի ափին ու Խրամ գետի ավազանում, Սյունիքում և այլուր:

Հին Հայաստանի ինժեներական մտքի և հասարակական հսկայածավալ աշխատանքի արգասիք է Արագած լեռան ողջ հարավային լանջը ծածկող ջրաբաշխիչ համակարգը: Այն, հավանաբար, սկսել է ձևավորվել արտադրող տնտեսության ժամանակներից, սակայն էականորեն համալրվել և գործել է բրոնզի ու վաղ երկաթի ժամանակաշրջաններում: Համալիրը բաղկացած է տասնյակ մեծ ու փոքր արհեստական լճակներից և դրանք միմյանց հետ կապող ջրանցքների բարդ համակարգից, որոնք հնարավորություն էին ընձեռում ձնհալնե-



Վայոց Ձոր, վիշապակոթող,
Ք.ա. XVII-XVI դդ.


Vayots Dzor, *vishap* stone
stela, 17th-16th cc. BC

These unique monuments are distinct and peculiar to the culture of the Armenian Highland. The *vishaps* (dragon stones), are huge monolithic stelae of basalt, up to 6 meters tall, which were erected amid natural and artificial lakes and springs, symbolizing the unruly elements of nature, awakening of nature, fertility, and abundance. *Vishap* stones were put inside burials as well, probably symbolizing reincarnation. According some scholars, the *vishaps* were dedicated to the goddess of love, fertility and waters – Astghik (Derceto, Aphrodite). Still others considered them as monuments dedicated to the dying and resurrecting deity – Ara the Beautiful.

Early examples of *vishaps* have a fish-shaped body, a big head, accentuated eyes, gills and flippers typical to the Wels catfish, *Silurus glanis*. Bodies of these monuments are often engraved with bull's heads with schematized horns. Most often, water is depicted flowing out of the bull's mouth, indicating the relationship of *vishaps* with vital power of the water. Later rectangular megaliths were sometimes engraved with images of the fell of a sacrificed bull – the head on one side of the stela and the lower extremities and the tail on the other side. There are also bas-reliefs of birds on these monuments, which were intended to be seen from all sides. To date, several dozen *vishap* stones were found in the Gegham Mountains, on the north-eastern shore of Lake Sevan, on the southern slope of Mt. Aragats, on the Parvana Lake shore in Javakhq, in the basin of the Khrami River, in Syunik, and elsewhere.

Networks of canals and water reservoirs built in the vicinity of *vishaps* on the southern slope of Mt. Aragats testify to the achievements of the ancient inhabitants of Armenia in hydro-technical engineering. Artificial irrigation, which possibly began during the Late Neolithic, was further developed in the Bronze and especially during the Iron Age. The irrigation network discovered on the slope of Aragats consists of a dozen large and small artificial lakes and of a complex system of canals, enabling the use of snowmelts and rainwater in the Aragatsotn foothills and meadows, as well as in the arid lowlands of the Ararat Plain. Some scholars have hypothesized that this water distribution system is depicted on a map-like rock carving found at Metsamor. These remains demonstrate the exceptional knowledge and skills of ancient builders of irrigation networks who managed the distribution of water resources along the slopes of the mountain by building reservoirs in specific locations that continue to feed into canals filling other reservoirs preserved for thousands of years to the present day (*Qare Lich* – Stone Lake). *Vishap* stones were also erected on the shores of these artificial lakes.

րի և անձրևաջրերի կուտակված ջուրը հասցնել Արագածոտնի նախալեռնային և հովտային, ինչպես նաև Արարատյան դաշտի տոթակեղ շրջանները: Պահպանվել է այդ ջրաբաշխիչ համակարգը պատկերող քարտեզ-սխեմա՝ փորագրված Մեծամորի ժայռի վրա՝ բրոնզեդարյան վարպետի ձեռքով: Հնագույն ջրաշինարարները խորապես ուսումնասիրելով լեռան հիդրոհամակարգը, ջրավազանները կառուցել են այնպիսի վայրերում, որոնք հազարամյակներ շարունակ, մինչ այսօր անխափան համարվում են ջրով (Քարե լիճ): Արհեստական այս ջրավազանների ափերին նույնպես կանգնեցվել են վիշապակոթողներ:



Էջ 40

Սարդարապատ, վիշապակոթող, Ք.ա. III-II հազ.

Մեծամոր, Արագած լեռան ջրաբաշխիչ համակարգի քարտեզը, Ք.ա. IV-II հազ.

Սարդարապատ, ձկնակերպ վիշապակոթող, Ք.ա. III-II հազ.

page 40

Sardarapat, *vishap* stone stela, 3rd-2nd mill. BC

Metsamor, the Aragats mountain irrigation system, 4th-2nd mill. BC

Sardarapat, fish-shaped *vishap* stone stela, 3rd-2nd mill. BC

Էջ 41

Երևան, վիշապակոթող, Ք.ա. XVII-XVI հազ.

Գեղամա լեռների ջրաբաշխիչ համակարգի քարտեզը, Ք.ա. IV-II հազ.

Երևան, ձկնակերպ վիշապակոթող, Ք.ա. III-II հազ.

Վանքի լիճ, ձկնակերպ վիշապակոթող, Ք.ա. III-II հազ.



page 41

Yerevan, *vishap* stone stela, 17th-16th cc. mill. BC

The map of an irrigation system in Geghama Mountains, 4th-2nd mill. BC

Yerevan, fish-shaped *vishap* stone stela, 3rd-2nd mill. BC

Vank Lake, fish-shaped *vishap* stone stela, 3rd-2nd mill. BC



Հակոբ Միմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԵՐՈՒՄ

(Ք.ա. 1500-800 թթ.)



Հայաստանի՝ միջին բրոնզի դարի մշակույթը էվոլյուցիոն գարգացման արդյունքում փոխարինվում է ուշ բրոնզի դարի միասնական մշակույթով: Այն բնորոշվում է քաղաքների, բերդշենների, կոթողային ճարտարապետության լայն տարածմամբ, հասարակության բարձրագույն աստիճանին կանգնած արքաների և արքայիկների, նրանց շրջապատող ազնվականության և արհեստավարժ ուղղվածների դասի կազմավորմամբ, արտադրության, մասնավորապես՝ մետաղագործության բնագավառում նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, տառերի առաջին նմուշների երևան գալով (Վերին Նավեր, Շամիրամ, Ուտիք): Հայկական լեռնաշխարհում, ներառյալ նաև Կախեթիայում (Վրաստան), այսինքն՝ միջին բրոնզի դարի գունազարդ խեցեղենի տարածման ողջ արեալում, հաստատվում է ուշ բրոնզի դարի միատիպ մշակույթը՝ զենքերը, զարդերը, գործիքները և կենցաղային իրերը բացառիկ նույնությամբ կրկնվում են միմյանցից հարյուրավոր կմ հեռավորությամբ գտվող հուշարձաններում: Առանձնապես հզոր կենտրոններ են ձևավորվում Արագա-




Լճաշեն, «արևային համակարգի» մանրակերտ, Ք.ա. XI-IX դդ.

Քարաշամբ, հատված դամբարանադաշտից, Ք.ա. XV-XIII դդ.

Lchashen, model symbolizing the Solar System, 11th-9th cc. BC

Qarashamb, part of necropolis, 15th-13th cc. BC



Hakob Simonyan

ARMENIA IN THE LATE BRONZE AND EARLY IRON AGES

(1500-800 BC)



Վանաձորի երկրագիտական թանգարան, դաշույն, Ք.ա. XV-XIII դդ.

Regional Museum of Vanadzor, dagger, 15th-13th cc. BC

Լճաշեն, դիասայլ, Ք.ա. XV-XIV դդ.

Lchashen, funeral wagon, 15th-14th cc. BC

Գեղարոտ, տաճարի ընդհանուր տեսքը, Ք.ա. XV-XIV դդ.

Gegharot, temple, 15th-14th cc. BC

Հարժիս, մենաքար, Ք.ա. XVII-XV դդ.

Harzhis, Menhir, 17th-15th cc. BC

A process of sociocultural homogenization developed in the Armenian Highland during the transitional period from the Middle to the Late Bronze Age. The latter is characterized by the spread of towns, fortified settlements, and monumental architecture across the landscape. Funerary monuments and related assemblages of artifacts together with site patterns testify to the development of a hierarchically organized society led by priests and kings, lords, and elites supported by a developing military class. The homogenous culture of the Late Bronze Age was spread throughout different zones of the Armenian Highland and Kakheti (Georgia). Across this broad expanse, weapons, ornaments, tools, and household items displaying exceptional similarity to one another were found at sites located hundreds of kilometers away from each other. Within this area, large fortified towns and related cemeteries were built in Aragatsotn (Verin Naver, Metsamor, Oshakan, Ujan, Shamiram), Sevan Lake basin (Lchashen), Artsakh (Arajadzor), Utiq (Khanlar), Gugark (Vanadzor, Lori Berd), Shirak (Horom, Harich, Artik), Upper Hayq, and elsewhere.





Լճաշեն, երկվող գավաթ,
Ք.ա. XV-XIV դդ.

ցլի արձանիկ,
Ք.ա. XV-XIV դդ.

Lchashen, incense burner,
15th-14th cc. BC

figurine of a bull,
15th-14th cc. BC

ծոտնում (Վերին Նավեր, Մեծամոր, Օշական, Ուջան, Շամիրամ), Սևանա լճի ավազանում (Լճաշեն), Արցախում (Առաջաձոր), Ուտիքում (Խանլար), Գուգարքում (Վանաձոր, Լոռի բերդ), Շիրակում (Հոռոմ, Հառիճ, Արթիկ), Բարձր Հայքում և այլուր: Հայկական լեռնաշխարհի ցեղերի և ցեղային միավորումների միաձուլման հետևանքով, որոնցում գերակայողը հնդեվրոպական էթնիկ տարրն էր, ձևավորվում են առաջին հզոր պետական կազմավորումները՝ Էթիունին, Հայասան, Միտանին, Արմե-Շուբրիան և այլն:

Հայաստանը հին աշխարհի այն տարածաշրջաններից է, որտեղ ծագել և ձևավորվել են ամրաշինության սկզբունքները: Բնակավայրերն արտաքին վտանգից զերծ պահելու և ճանապարհները հսկողության տակ առնելու նպատակով հզոր պարսպաշրջանների կառուցման սկզբունքը Հայաստանում սկիզբ է առնում վաղ բրոնզի դարում, սակայն վերջնականապես ձևավորվում և լայն կիրառում է ստանում ուշ բրոնզի դարում, հիմք դնելով հայ մշակույթին խիստ բնորոշ «կիկլոպյան» կոչվող ամրոցների կամ բերդշենների մշակույթին: Դրանք ունեն 3-7 շարք շրջապարիսպներ և զբաղեցնում են 40-60, իսկ առանձին դեպքերում 100 հա-ից ավելի տարածք (Մոտկան բերդ): Հայկական լեռնաշխարհի գրեթե ողջ տարածքը ծածկվում է բերդշենների խիտ ցանցով (հայտնի է մի քանի հարյուր բերդշեն), որոնք կառուցվել են բնականից դժվարամատչելի վայրերում. լեռների բարձրադիր լանջերին, կոնաձև բլուրների գագաթներին, երեք կողմից անդնդախոր կիրճերով շրջապատված հրվանդանների վրա: Բերդշենների բնորոշ հատկանիշներից են ռելիեֆի ընձեռած հնարավորությունների առավելագույն օգտագործումը, պարիսպների և մուտքերի ամրացումն ուղղանկյուն որմնահեցերով, դեպի միջնաբերդ տանող ճանվին մինչև յոթ շարք պարիսպների հիմնումը: Պատերի պահպանված բարձրությունը հասնում է 7 մ (Թղիթ), հաստությունը՝ 6 մ (Մոտկան բերդ, Ծիծեռնակաբերդ և այլն):

Տաճարական համալիրներ են պեղվել Դվինում և Մեծամորում: Դվինի սրբարաններում հայտնաբերվել են թրծակավից կենդանիների և երկրաչափական ռելիեֆ ֆիգուրներով զարդարված ուղղանկյուն տախտակ-զոհարաններ, որոնց առջև վառվել է անշեջ կրակ: Մեծամորի տաճարում բացված կավակերտ, աղորացիայի դիրքով տարբեր մեծության մարդակերպ քանդակները խորհրդանշել են հայր, մայր և որդի եռամիասնությանը:

Վերնախավի դամբարաններն ունեն մինչև 50 մ տրամագծով և 2 մ բարձրությամբ քարահողային դամբանաթմբեր, որոնց կենտրոնական մասում ուղղանկյուն հատակագծով, կիսագետնափոր դամբանաարաններ են՝ կառուցված ճակատային մասերը հարթեցրած տուֆե և բազալտե հսկա քարերից: Դրանք ունեցել են ինչպես ուղիղ շարված պատեր և գերանա-սալաքարային բարդ ծածկեր (Լճաշեն,



Մեծամոր, Բաբելոնի արքա Ուլամ-Բուրիաշի սեպագիր կշռաքարը, Ք.ա. XVI-XV դդ.

Լճաշեն, մարտակառքի մանրակերտ, Ք.ա. XV-XIV դդ.

Metsamor, weight with cuneiform inscription of Babylonian king Ulam-Burishash, 16th-15th cc. BC

Lchashen, model of a chariot, 15th-14th cc. BC




Initially small polities merged into larger socio-political units, such as Etiuni, Hayasa, Mitanni, and Arme-Shubria, which politically controlled large areas of the Armenian Highland and were united mostly by the Indo-European element. The western and southern borderlands of the Armenian Highland dominated by the Hittite Empire and Mitanni Kingdom.

The Armenian Highland was one of regions of the ancient world where the principles of fortification characteristic of mountainous areas were developed. In order to protect settlements and control access, the building of huge fortress walls started locally in the Early Bronze Age, and continued through the Middle Bronze Age (Ashtarak Berdshen). It was in the Late Bronze Age, however, that the principles of highland military architecture were implemented on a larger scale and became represented by the so-called “cyclopean” fortresses and fortified settlements, which are so typical of the Armenian culture. They featured between three and seven concentric fortress walls and occupied up to 40-60 hectares of land, and in certain cases, over 100 hectares (fortress of Motkan). Almost the entire territory of the Armenian Highland was covered with a dense net of fortified settlements (over several hundred fortified settlements are known today) which were established in naturally protected areas – on the high slopes of mountains, the tops of hills, and promontories surrounded by deep canyons. One of the salient characteristics of fortified settlements was a maximum use of the features of natural relief, which were supplemented by fortification walls, and entrances defended by rectangular towers and buttresses. The preserved height of the walls reaches up to 7 meters (Tghit) with thickness up to 6 m (fortress of Motkan, Tsitsernakaberd, etc.).

Temple complexes were excavated at Dvin, Metsamor and Gegharot. In the sanctuaries of Dvin, rectangular terracotta standing-altars were uncovered. Those are decorated with zoomorphic and geometric relief figures with a sacred fire burning in front of them. In the temple of Metsamor, anthropomorphic clay statues of various sizes depicted in poses adoration of symbolized a divine trinity.

Burials of the elites have stone-earthen burial mounds up to 50 meters in diameter and 2 meters in height. In the central part, rectangular, partially subterranean burial chambers were dug out with walls built of tufa and basalt slabs, flattened on the facing side the chamber. These burials featured both vertical walls covered with timber roofs (Lchashen, Verin Naver), as well as walls gradually narrowing in the upper part (false dome), and constructions covered with single or multiple flat capstones (Verin Naver, Shamiram). The walls of burial chambers were covered with carpets and mats, as well as valued fells of animals (the hide with horns and hooves still attached). The cromlechs (stone circles surrounding the burial mound) were constructed of stones not locally sourced but brought from



Մեծամոր, մանյակ,
Ք.ա. XIV-XIV դդ.

Metsamor, necklace,
15th-14th cc. BC

Կորիզազու արքայի
հիերոգլիֆ արձանագրու-
թյամբ գլանաձև կնիքը,
Ք.ա. XV-XIV դդ.

cylinder seal of the
Babylonian King Kurigalzu
with hieroglyphic
inscriptions, 15th-14th cc. BC

Վերին Նավեր), այնպես էլ աստիճանաբար դեպի վեր նեղացող պատեր (կեղծ թաղ) և միակտոր սալերով ծածկված կառուցվածքներ (Վերին Նավեր, Շամիրամ): Դամբանասարահների պատերը ծածկված են եղել գորգերով, կարպետներով, կենդանիների թանկարժեք մորթիներով: Հատուկ բերած գետաքարերով ձևավորել են կրունկները, որոնցից սկիզբ են առնում դեպի դամբանասարահ թերթյամբ իջնող դամբանամուտքեր (*դրոմոս*): Դամբարանների չափերը, թաղման ընծաների ճոխությունը և բազմաֆունկցիոնալությունը (զենքեր, գործիքներ, իշխանության խորհրդանշաններ), ծիսական արարողությունների համար նախատեսված առարկաները, զարդերը, կենցաղային և պաշտամունքային իրերը, մարտակառքերը, սայլերը և պատգարակները (*կարաֆալկա*), մարդկանց, թռչունների, ընտանի և վայրի կենդանիների, այդ թվում՝ նաև առյուծի (Վերին Նավեր) մեծաքանակ գոհաբերությունները վկայում են արքաների և գերագույն քրմերի այստեղ կատարված թաղումների մասին: 2012 թ. Վերին Նավերի արքայական I դամբարանում (Ք.ա. XVI-XV դդ.) հայտնաբերվել են Բաբելոնից (ջնարակով ծածկված կավե ուլունքներ), Ալկադից (ծովային խխունջներ Պարսից ծոցից), Չինաստանից (սեֆրիտ) ներմուծված իրեր, ոսկյա թիթեղով երեսապատված առաջնորդ-արքաների դիմաքանդակներով մեղալիոններ (բիտում), արխարների ու կենսաց ծառերի պատկերներով ուսագոտու ճարմանդներ: Սրանք մեծ նմանություն ունեն միջին Էլամական արվեստի նմուշներին:

Շամիրամի, Օշականի, Լճաշենի և այլ դամբարանադաշտերում հայտնաբերվել են 1-2 մ բարձրությամբ տուֆե ֆալլոսներ: Դամբարանների վրա դրվում էին մարդահասակ անտրոպոմորֆ քանդակներ: Դրանցից մեկը պատկերում է գրահակիր զինվորի (Շամիրամ):

Բացառիկ է Ք.ա. II հազարամյակի կեսի բրոնզե կլոր քանդակը: Հայաստանի հնագույն արվեստին բնորոշ ռեալիզմն այս դարաշրջանում հասնում է հիացմունքի արժանի արտահայտչականության: Մետաղապլաստիկայի նմուշները պատրաստվել են հավված վիճակում մեծ հոսունությամբ օժտված բրոնզից՝ մոմե կաղապարներով, ինչը ենթադրում է դրանցից յուրաքանչյուրի եզակի, անկրկնելի լինելը: Բրոնզե պլաստիկային բնորոշ է խիստ որոշակի թեմատիկ ռեպերտուար: Դրանք անտրոպոմորֆ աստվածություններ են, դիցաբանական հերոսներ, պաշտվող կենդանիներ (ցուլ, այծ, եղջերու) և թռչուններ (ոսկեգույն արծիվ, աղաճի և այլն): Արձանիկներն ամրացվել են գավազանների, զինանշանների (շտանդարտ) և մարտակառքերի վրա: Ուշագրավ են դիցաբանական պոմեներով խմբաքանդակները, որոնց կոմպոզիցիաներին բնորոշ է ռիթմիկ հավասարակշռությունը: Առանձնանում են երկանիվ



Լճաշեն,
թռչնակերպ կախիկ,
Ք.ա. XIV-XII դդ.

Վերին Նավեր,
ուսագոտու ճարմանդ,
Ք.ա. XVI-XV դդ.

Lchashen, bird-shaped pen-
dant, 14th-12th cc. BC

Verin Naver, shoulder belt
buckle, 16th-15th cc. BC

a distance. Entrances to burial chambers were built as downward slanting passageways (*dromos*). The sizes of the burials, splendor and diversity of funeral gifts (weapons, tools, symbols of power), ritual objects, ornaments, household and cultic items, chariots, carriages and catafalques, sacrifices of humans, birds, domestic and wild animals, including lions, allow us to attribute such burials to the ruling elites.


The royal tomb I of Verin Naver (1600-1400 BC) was excavated in 2012 and contained imported objects such as glazed beads from Babylon, seashells from the Persian Gulf, and nephrite from China. Most notable among the Verin Naver artifacts are medallions made of bitumen and covered with gold foil, featuring the image of a heroic personage, together with sacred animals and the tree of life. This set of medallions and buckles has close parallels in the art of Middle Elamite culture.

At Shamiram, Oshakan, Lchashen and other cemeteries, tufa phalli ranging from one to two meters in height were uncovered. Human-size anthropomorphic statues were erected over the burials, one of which depicts an armored warrior (Shamiram).

Bronze sculpture in the round which appears during mid-second millennium BC is of exceptional interest. Pictorial art of this epoch is characterized by naturalism and achieves admirable expressivity. Artistic metal sculpture was made of bronze in lost wax casting technique. Themes and imagery presented by these bronzes are depictions of anthropomorphic deities, mythological heroes, sacred animals (bull, goat, deer) and birds (golden eagle, swan, dove). The figurines were fastened on staffs, standards, and chariots. Some bronze figurines present battle chariots with two warriors driving galloping horses in pursuit of animals. Among the metal sculpture from Lori Berd, the figurine of a bearded man is of outstanding interest. Images of a swastika were engraved on his hips. The proportions of broad shoulders, slim waist, and firm posture expressed in this statuette pre-date those elements in the depiction of the male body which later are characteristic of the Archaic Greek art. The figurine of the Shirakavan hero dragging the terrifying chained beast of the Netherworld depicts the hero and the beast endowed with immense power. Most probably the theme represented by this sculpture reverberates in one of the most favorite Armenian epic personages – the Lion-slayer Mher.

The artistic metalwork of the Early Iron Age is represented by much smaller objects. Those are models of chariots, small figurines of males and females, as well as dogs, horses, deer, and birds. Human figures are distinguished by characteristics of heroes, expressing power, elegance, fierce nature, athletic forms, etc. (Paravakar, Airum, Artsvakar).

A significant part of artistic metalwork is represented by decorations of bronze belts. Among hundreds of belts, the samples from Lchashen,



Միսիան, եռադեմ աստվածության քարե արձան, Ք.ա. I հազ.

Sisian Regional Museum, bust of a triple-faced deity, 1st mill. BC

Արտաշավան, հատված ամրոցի պարսպից, Ք.ա. XIV-XI դդ.

Artashavan, a fragment of a fortification wall of the fortress, 14th-11th cc. BC

Ուջան, Մոտկան բերդ, հատված բերդի պարսպից, Ք.ա. XIV-XI դդ.

Ujan, Motkan Berd, a fragment of a fortification wall, 14th-11th cc. BC

Վերին Նավեր, IA դամբանարանի, Ք.ա. XVI-XV դդ.

Verin Naver, IA burial chamber, 16th-15th cc. BC

մարտակառքերի մանրակերտերը, որոնց թափքերին կանգնած ռազմիկների իրանների դիրքը մեզ հաղորդում է մարտակառքերի սրարշավ վարգի զգացումը: Լոռի բերդի մետաղապլաստիկայում բացառիկ է մորուքավոր զինվորի քանդակը: Այս, ազդրերի վրա ճանկախաչերով (սվաստիկա), լայնաթիկունք, նեղ մեջքով և հզոր ազդրերով քանդակը կարծես նախանշում է հետագայում հունական արվեստում կանոնիկ դարձած այրական գեղեցկության հիմնադրույթները: Շիրակավանի հերոսի քանդակը՝ շղթայակապ, սարսափազդու գիշատիչ գազանի (առյուծ) հետ պատկերում է հերոսի և գազանի ահռելի ուժով օժտված կերպարները: Ամենայն հավանականությամբ, այն հայկական էպոսի սիրված հերոսներից մեկի՝ առյուծաձև Միտի նախատիպն է:

Վաղ երկաթի դարում մետաղապլաստիկան ավելի փոքր չափի է: Հանդիպում են մարտակառքերի մանրակերտեր, կանանց և տղամարդկանց, ինչպես նաև շների, այծերի, ձիերի, եղջերուների և թռչունների արձանիկներ, որոնք բնորոշում են հերոսների հատկանիշները՝ ուժը, նրբագեղությունը, կատաղի բնույթը, ատլետիկ կազմվածքը և այլն (Պատավաքար, Այրում, Արծվաքար):

Արվեստի առանձնահատուկ բնագավառ է բրոնզե գոտիների պատկերագրությունը: Հայաստանում հայտնաբերված հարյուրավոր գոտիներից առանձնանում են Լճաշենի, Ստեփանավանի, Աստղի բլրի օրինակները: Բրոնզե լայն թիթեղների վրա, փորագրման տեխնիկայով, պատկերված են սրբազան բեղմնավորման, դիցաբանական և կենցաղային, մարտի ու որսի տեսարաններ: Կենտրոնական սյուժեն շրջափակում է երկու-երեք շարք ձգվող եղևնազարդ կամ «վազող» գալարներով եզրագոտին: Փորագիր պատկերներն ունեն հանդիսավոր-ստատիկ կամ ընդգծված պլաստիկ շարժունություն: Իրական պատկերներին զուգահեռ, մեծաթիվ են նաև մարդկանց և կենդանիների ֆանտաստիկ ֆիգուրները: Տարածված է եղել եղջերուների, այծերի, թռչունների, երկնային լուսատուների, առյուծաղեմ մարդկանց և եղջերավոր ձիերի (միաեղջյուր) պատկերագրումը: Մարտակառքերով մարտի տեսարանները պատկերացում են տալիս այդ ժամանակաշրջանի Հայաստանի զինված զորքերի կառուցվածքի մասին, որոնք կազմված էին ծանրազեն հետևակից՝ զինված երկար սիզակներով և ուղղանկյուն, մեծ վահաններով, թեթևազեն հեծելազորից, առաջապահ և վերջապահ զնդերից: Վերնախավի դամբարաններից (Մեծամոր) հայտնաբերված՝ Միջագետքի թագավորների ու կառավարիչների անձնական կնիքները վկայում են, որ հայկական բանակները հաջող պատերազմներ են մղել հզորագույն պետությունների տարածքներում՝ այնտեղից բերելով հարուստ ավար: Այս «հերոսական» դարաշրջանում ավարտվում է հայ ժողովրդի կազմավորման առաջին՝ նախնական փուլը:



Վերին Նավեր, հերակա, Ք.ա. XVI-XV դդ. Verin Naver, tress holder, 16th-15th cc. BC

Վերին Նավեր, հերոս-արքայի դիմաքանդակ, Ք.ա. XVI-XV դդ. Verin Naver, portrait of a hero-king, 16th-15th cc. BC


հերոս-արքայի վերականգնված դիմաքանդակը portrait of a hero-king, reconstruction

Վերին Նավեր, նետապարներ, Ք.ա. XVI-XV դդ. Verin Naver, arrowheads, 16th-15th cc. BC

Stepanavan, and Astghi Blur stand out. Mythological themes presenting battle and hunting scenes were created by engraving technique over a large bronze sheet. Central compositions were framed with two-three rows of decorations, among which “running spirals” are particularly distinctive. Along with naturalistic images, fantastic anthropomorphic and zoomorphic figures are often portrayed. Among these engravings of deer, goats, birds, solar images, lion-faced humans and horned horses (unicorns) testify to a specific perception of universe through artistic imagination. Battle scenes provide a glimpse of the Armenian armed troops of that period, consisting of chariots, heavy infantry armed with long spears, lightly armed cavalry, and vanguard units. This “Heroic Age” coincides with the end of the initial stage in the formation of the Armenian people.



Մինոն Հնայակյան
ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՈՒՐԱՐՏՈՒ)



Մուծածիրի տաճարը՝ ըստ Դուր-Շարուկինի պալատի XIII սրահի բարձրաքանդակի, Ք.ա. IX-VIII դդ.
 Temple of Mutsatsir, depicted on to the bas-relief in hall XIII of the palace of Dur-Sharrukin, 9th-8th cc. BC


Էրեբունի ամրոց, որմնանկար՝ Խալդիի առյուծի վրա, Ք.ա. VIII դ.
 Erebuni fortress, wall-painting, god Khaldi on a lion, 8th c. BC

Վանի թագավորությունը Հայկական լեռնաշխարհում ձևավորված հին արևելյան տերություն էր: Այն հիմնադրվել է Ք.ա. IX դարում, գոյատևել առաջավորասիական հին քաղաքակրթություններին բնորոշ օրինաչափություններով և եղել տարածշրջանի քաղաքական կյանքը կարգավորող երկրներից մեկը: Մայրաքաղաքն էր Տուշպան (Վանը), պաշտամունքային կարևոր կենտրոնը՝ Խալդի աստծո քաղաքը՝ Մուծածիրը: Գոյության շուրջ 300-ամյա ընթացքում երկրի պետական կարգը և հասարակական հարաբերություններն ունեցել են ձևավորման ու զարգացման երեք հիմնականում փուլ:

Կազմավորման շրջան. սկսվում է Ք.ա. IX դարում, Արամե արքայի օրոք: Արդեն այդ ժամանակ Ուրարտուն ուներ հզոր բանակ, ամրացված քաղաքներ, որոնցից հայտնի են երկուսը՝ Արծաշկուն և Սուգունիան: Պետության կազմավորումն ավարտվեց IX դարի վերջին՝ Սարգուրի I, Իշպուինի և Մենուա արքաների օրոք, որոնք իրագործեցին պետականության հիմքը կազմող բարեփոխումների մի ամփոփ ծրագիր: Դրանց արդյունքում երկիրն ստացավ պետական գրավոր խոսք՝ ուրարտերենը, մայրաքաղաքը սահմանվեց Տուշպան, հետագայի Վանը, որն ամրացվեց հզոր պարիսպներով, կառուցապատվեց և դարձավ Հայկական լեռնաշխարհի հոգևոր, մշակութային ու քաղաքական կարևոր կենտրոնը: Ձևավորվեց պետական կրոնը և պանթեոնը, որի մեջ ընդգրկված էին տարածաշրջանի բոլոր քաղաք-պետությունների, իշխանությունների և ցեղապետությունների գլխավոր աստվածներն ու աստվածուհիները: Պանթեոնը գլխավորում էին Խալդի (լույսի), Թեյշեբա (բնության տարերքի) և Շիվինի (արևի) աստվածությունները: Երկիրն ունեցավ նաև օրացույց, չափ ու կշռի ստանդարտներ, ըստ գորատեսակների կարգավորված և երկաթե զենքերով զինված բանակ: Կարգավորվեցին սոցիալական հարաբերությունները, հողին տիրապետելու իրավունքներն ու սկզբունքները:

Տերության ձևավորման փուլն սկսվում է Ք.ա. 810-ականներից՝ Իշպուինիի և Մենուայի արշավանքներով և ավարտվում Սարգուրի II-ի գահակալության տարիներով, երբ Վանի արքաների տիրապետության ներքո միավորվեց համայն Հայկական լեռնաշխարհը, տերության գերիշխանությունը տարածվեց հարավային Կովկասի, Իրանական սարահարթի արևմտյան շրջանների, արևմուտքում՝ հյուսիսային Սիրիայի վրա: Այս ժամանակ ծաղկում է քաղաքաշի-

Simon Hmayakyan
THE KINGDOM OF VAN (URARTU)



Հիրկանիա, Լուվրի թանգարան, ընծայական թիթեղ՝ Խալդիի և Արուբանիի պատկերներով, Ք.ա. VIII դդ.
 Hirkanis, Louvre Museum, gift plate with images of deities Khaldi and Arubani, bronze, 8th c. BC

Լորի-բերդ, ձիու սանձ, Ք.ա. VIII-VII դդ.
 Lori-Berd, horse-bit, 8th-7th cc. BC

The Kingdom of Van was an ancient polity formed in the Armenian Highland. Having been established in the ninth century BC, it presented features peculiar to other Ancient Near Eastern civilizations and became a state controlling the political life of the region. Tushpa (Van) was its capital, and Musasir, the city of its supreme god Khaldi, was an important religious center. In the 300 years of its existence, the system of governance and social relations in the country passed through three main phases of formation and development.

The Formative period started in the ninth century BC during the reign of King Arame. Urartu had a powerful army and fortified cities, among which Artsashku and Sugunia are the best known in cuneiform sources. The process of formation of the Urartian state was completed by the end of the ninth century BC during the reigns of Sarduri I, Ishpuini, and Menua, who realized a complete program of reforms that formed the basis of the new statehood. Due to these reforms, a uniform written language of the state was adopted and Tushpa (Van) became its capital. The citadel of Tushpa was fortified with powerful fortress walls, and became the most important spiritual, cultural, and political center. The state religion was formed during this time, consisting of main gods and goddesses of all city-states, principalities, and tribal unions of the region. The pantheon was lead by the deities Khaldi (the Divine Light), Teisheba (the Elements of Nature) and Shivini (the Sun). An official calendar was created, standards of measures and weights were established, and a standing army composed of different regiments of regular troops armed with weapons of steel was formed. Social relations were legislated along with the rights and principles of landownership.

The phase of Empire started with the campaigns of Ishpuini and Menua after 810 BC and lasted through the reign of Sarduri II. During that phase, the whole Armenian Highland in its entirety was unified under the kings of Van, whose hegemony spread over the Southern Caucasus, most of modern Eastern Turkey, western regions of the Iranian Plateau, and, for a brief moment, over some areas in Northern Syria. The building of new urban centers was initiated and the cities of Menuakhinili, Erebuni (Yerevan), and Argishtikhinili (Armavir) became the most important in the northern part of the Armenian Highland. Crafts, trade, art, and spiritual life rapidly advanced during this period.

The third phase of Urartian Kingdom began with the fierce struggle lead by Rusa I against the Cimmerians and the Assyrians after 720 BC, which re-



նությունը. հիմնադրվում են նոր քաղաքներ՝ Մենուախինիլին, Էրեբունին (Երևանը), Արգիշթիխինիլին (Արմավիրը) և այլն: Ծաղկում են արհեստները, առևտուրը, արվեստը, հոգևոր կյանքը:

Երկրի գոյաբանման երրորդ փուլն սկսվում է Ք.ա. 720 թ. կիմերների ու Ասորեստանի դեմ Ռուսա I-ի մղած համառ պայքարով: Արտաքին վտանգին դիմակայելու և տնտեսական զարգացման արդյունքում երկիրը ծաղկում է ապրում: Հիմնվում են նոր քաղաքներ՝ Թեյշեբահինին (Կարմիր բլուր)՝ Արարատյան դաշտում, Ռուսախինիլին և Այանիսը՝ Վանա լճի ավազանում և այլն: Կառուցվում են նոր ջրանցքներ, զարգանում են առևտրական հարաբերությունները հարևան երկրների, այդ թվում՝ սկյութական աշխարհի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ:

Ուրարտական մշակույթը զարգացել է երեք հիմնական ուղղություններով. առաջինը՝ վաղ երկաթեդարյան ավանդական մշակույթն էր, որը հարատևեց մինչև հելլենիզմ, երկրորդը՝ վերոհիշյալ բարեփոխումների արդյունքում ձևավորված պալատական, այժմ՝ *վանարուսայան* անվանված և երրորդը՝ այս երկուսի միաձուլման արդյունքում ձևավորված *ուրարտական* մշակույթներն էին:

Ուրարտական արվեստում կանոնակարգված ստատիկ կերպարներին զուգահեռ փորձում էին լուծել հեռանկարի խնդիրը, մասի միջոցով վերարտադրել ամբողջը, տոնականություն հաղորդել հորինվածքներին:

Զարգանում են արվեստի այնպիսի բնագավառներ, որպիսիք են որմնանկարչությունն ու քանդակագործությունը, կիրառական արվեստը և այլն՝ իրենց բոլոր դրսևորումներով: Առանձնապես տպավորիչ են ուրարտական ճարտարապետական հուշարձանները: Դրանցից առանձնանում է Մուծածիրի տաճարը: Մրա հորինվածքը, շատ ուսումնասիրողների կարծիքով, որոշակի ազդեցություն է ունեցել հունական դասական տաճարաշինության վրա: Տպավորիչ են նաև մանրաքանդակները՝ Արուբանի, Թեյշեբա, Խալդի աստվածությունների արձանները, Կարմիր Բլրի խուփը՝ նույն քանդակով, ոսկրից և փայտից կերտված դիցաբանական կերպարները և այլն:

Ք.ա. VII-VI դդ. տարածաշրջանում հզորանում է իրանական տարրը, որը և նվաճում է սկզբում Ասորեստանը, ավելի ուշ՝ Բաբելական թագավորությունը, Լիդիան ու Եգիպտոսը: Հայկական լեռնաշխարհում Ք.ա. VI դ. ձևավորվում է Երվանդունիների հայկական պետությունը:

Կերեն, մարդակերպ պոչակ, Ք.ա. VII-VI դդ. Keren, anthropomorphic rhyton, 7th-6th cc. BC

Կարմիր բլուր՝ Թեյշեբահինի, զարդատուփ, Ք.ա. VII դ. Karmir Blur, Teishebaini, jewelry box, 8th c. BC

Երևան, անոնասափոր՝ ցլագլուխ քանդակներով, Ք.ա. VIII դ. Yerevan, funerary urn with bull-headed applications, 8th c. BC



Կարմիր բլուր՝ Թեյշեբահինի, սաղավարա՝ Արգիշթի Ա-ի նվիրատվական արձանագրությամբ, Ք.ա. VIII դ.



Կարմիր բլուր՝ Թեյշեբահինի, վահան՝ Ռուսա Ա-ի նվիրատվական րձանագրությամբ, Ք.ա. VIII դ.

Կարմիր բլուր՝ Թեյշեբահինի, զարդատուփի կափարիչ՝ նոնան բռնակով և Արգիշթի Ա-ի արձանագրությամբ, Ք.ա. VIII դդ.

Էրեբունի, քաղաքի հիմնադրման՝ Արգիշթի Ա-ի սեպագիր արձանագրությունը, Ք.ա. 782 թ.

Karmir Blur, Teishebaini, helmet of Argishti I, 8th c. BC

Karmir Blur, Teishebaini, shield with the donating inscription of Rusa I, 8th c. BC



Karmir Blur, Teishebaini, lid with a pomegranate-shaped handle and an inscription of Argishti I, 8th c. BC

Erebuni, cuneiform inscription concerning the foundation of the city by Argishti I, 782 BC

sulted in its temporary decline. Under his successors, Argishti II and Rusa II, Urartu experienced its final revival. New economic growth spurred the construction of new cities such as Teishebaini (Karmir Blur) in the Ararat Plain, Rusakhinili (Toprak Kale) and Ayanis in the Van Lake basin, as well as many others. New systems of irrigation were built and trading relations with neighboring countries, as well as the Scythian world, India, and other remote lands.

Three main components can be identified within the Urartian culture. First is the artificially created palatial culture of the empire (sometimes referred to as the *Van-Tosp* culture), imposed upon the conquered territories of the Armenian Highland. The second component consisted of multiple local cultures of conquered people, derived from the Early Iron Age traditions, which demonstrate continuing development to the Hellenistic Period. The third was the *Urartian* culture, emerging as a result of the merger of the aforementioned components.

Urartian art developed a canon of static images and tried to solve the issue of perspective through detail and the introduction a festive quality in the composition. Mural painting, sculpture, and applied arts were flourishing in the palatial culture of that time. Urartian architectural monuments were especially renowned. Among them, the design of the Temple of Musasir is thought to had a certain impact on the formation of the Classical Greek temple plan. Miniature depictions of gods and goddesses Arubani, Teisheba, and Khaldi, as well as a lid from a cultic vessel found at Karmir Blur with a pomegranate and mythical images in bone and wood are especially impressive.

With the collapse of the Assyrian Empire at the end of the seventh century BC, Babylonia and Media became the new imperial powers of the Ancient Near East, and later in the sixth century BCE, they were replaced by the Achaemenid Empire. It was during that period that the Armenian polity, led by the Yervandean dynasty, replaced the Kingdom of Van.





Հայկ Հակոբյան
**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ԵՎ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ
 ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ**

Վանի թագավորության անկումից հետո, Ք.ա. VI դարի սկզբին, Մերձավոր Արևելքում հին կայսրությունների (Ասորեստան, Բաբելոն, Եգիպտոս) կործանման ժամանակաշրջանում, Երվանդունի տան ներկայացուցիչները, սկսած Երվանդ I Սակավակյացից ու Տիգրան Երվանդյանից, կարողացան պահպանել Հայաստանի տարածքային և հոգևոր ամբողջությունը: Դարեհ I-ի Բեհիսթունյան արձանագրության մեջ Ուրարտու կամ Արմինա կոչված այս ընդարձակ երկիրը, որի սահմանները հասնում էին Անտիտավրոսից մինչև Կասպից ծով, Միջագետքից մինչև Պոնտական լեռները և Կուր գետի ափերը, դարձավ Վանի թագավորության քաղաքական և մշակութային լիիրավ հաջորդը: Երվանդյան Հայաստանի արքաները և սատրապները կարևոր դիրք ունեին Մարաստանի և սրան հաջորդած Աքեմենյան Պարսկաստանի արքունիքում: Օրոնտիդները (Երվանդյանները) սատրապներ էին Փոքր Ասիայի տարբեր նահանգներում: Ալեքսանդր Մեծի արևելյան արշավանքի վճռական պահին՝ Գավգամելայի ճակատամարտում (331 թ.), նրա ախոյան Դարեհ III-ի զորաբանակի աջ թևում կռվող մակեդոնացիներին խիստ նեղում էին Երվանդունիների միավորումները:

Ալեքսանդրի և դիադոխների ժամանակ Հայաստանն անկախ էր: 201 թ. Մեծ Հայքի թագավոր Երվանդ Վերջինից գահը խլեց մեկ այլ Երվանդունի՝ Արտաշես I-ը (Ք. ա. 201-163 թթ.): Ստրաբոնի «Աշխարհագրությունում» վկայված է, որ այդ ժամանակ Հայաստանում բոլորը խոսում էին հայերեն: Արտաշեսն էր, որ Երվանդունիների Հայաստանը կրկին վերամիավորեց իր ընդարձակ սահմաններում՝ հարևաններից հետ բերելով կորցրած նահանգները:


Հելլենիստական դարաշրջանի Հայաստանում, ինչպես Մերձավոր Արևելքի մյուս երկրներում, զարգացել է քաղաքաշինությունը: Հայոց արքաները շենացրին հին քաղաքները՝ Վանը, Արմավիրը, Էրեբունին ու հիմնեցին տասնյակ նոր քաղաքներ, որոնք կոչեցին իրենց անուններով՝ Սամոսատը, Արսամեաները՝ Կոմմագենետում, Արշամաշատը՝ Ծոփքում, Երվանդաշատը և Արտաշատը՝ Արարատյան դաշտում: Սրանք Չինաստանից և Հնդկաստանից դեպի Միջերկրածովի ավազան ձգվող միջազգային առևտրական ուղու մարդաշատ և բարեկարգ քաղաքներից էին, որոնց մասին վկայում են հունա-հռոմեական մի շարք պատմիչներ: Դրանցում ապրում էին հայեր և հելլենիստական երկրներից Հայաստան տեղափոխված այլ ժողովուրդների տասնյակ հազարավոր ներկա-

Էրեբունի, պտյակ՝
 եղջերվի գլխի քանդակով,
 Ք.ա. VI-IV դդ.

Էրեբունի, պտյակ՝ ձիու
 առջամասով, Ք.ա. VI-IV դդ.

Erebuni, rhyton with the
 head of a deer, 6th-4th cc. BC

Erebuni, rhyton with a pro-
 tome of a horse, 6th-4th cc. BC



Hayk Hakobyan
ARMENIA IN THE ACHAEMENID AND HELLENISTIC PERIODS

After the fall of the Van Kingdom at beginning of the sixth century BC, during the period of turmoil and decline of empires in the Ancient Near East (Assyria, Babylon, Egypt), the local Yervandean (Orontid) dynasty, starting from Yervand I Sakavakeats (the Short-Lived) and Tigran Yervandean, managed to preserve the local autonomy of Armenia. The polity that emerged on the vast territory of the Armenian Highland, was still called Urartu or Armina (in the Behistun inscription), the borders of which extended from Anti-Taurus Mountains to the Caspian Sea, from Mesopotamia to the Pontic Mountains and the banks of Kura River. It became the political and cultural successor of the Van Kingdom. The kings and satraps of Yervandean Armenia played an important role within the Median Kingdom and its successor, Achaemenid Persia. Representatives of the Yervandean (Orontid) dynasty are mentioned as satraps in various provinces of Asia Minor.

During the battle of Gaugamela (331 BC), which sealed the fate of the Persian Empire during its conquest by Alexander the Great, the right wing of the army of his rival, Darius III, was composed of Armenian troops. In the time of Alexander and his successors, known as the Diadochi, the Armenian Highland was not under the control of foreign powers. In 201 BC, the throne of the King of Greater Armenia, Yervand the Last, was seized by another Yervandean – Artashes I (201-163 BC). Strabo's *Geography* testifies that the inhabitants of the Armenian Highland spoke the Armenian language during this period. Artashes reunited the territories of Yervandean Armenia, by re-conquering lost provinces from neighboring powers.

Like in other states of the Near East, urbanization developed in Armenia during the Hellenistic period. Alongside such ancient cities as Van, Armavir and Erebuni, kings of Greater and Minor Armenias founded dozens of eponymous cities – Samosata and Arsamea in Kommagene, Arshamashat in Tsophk (Sopnone), Yervandashat, and Artashat in the Ararat Plain. Most of these populous and prosperous cities were located at junctures of major trade routes connecting Central Asia and north-western India to the Mediterranean, which is mentioned by a number of Greek and Roman authors. These cities were inhabited by Armenians together with tens of thousands of representatives of other nations, who had moved from Hellenistic countries. Various crafts were prospering as Armenia was importing goods and exporting its own agricultural and



Արմավիր, կրծքագարդ,
 Ք.ա. VI-V դդ.

Երզնկա, թաս-ըմպանակ,
 Ք.ա. VI-IV դդ.

Armavir, pectoral,
 6th-5th cc. BC

Yerznka, bowl, 6th-4th cc. BC



յացուցիչներ, ծաղկում էին գանազան արհեստներ: Հայաստանը ներմուծում էր ապրանքներ և արտահանում գյուղատնտեսական ու արհեստագործական արտադրանք, հանքանյութեր, որի մասին վկայում է հռոմեական պատմիչ Պլինիոս Ավագը: Հայաստանի վարպետները հատկապես հնուտ էին գեղարվեստական մետաղագործության մեջ: Սրա վկայությունը Վանից, Արմավիրից, Արտաշատից, Լոռի բերդից հայտնաբերված բարձրարվեստ զարդերն են՝ կենդանիների գլուխներով ապարանջաններ, կրծքազարդեր, թանկարժեք մետաղյա սպասք: Աչքի են ընկնում, մասնավորապես, անոթների ձևավոր բռնակները, արծաթե պոյակները:

Հելլենիստական Հայաստանի պետություններից ամենախոշորը Մեծ Հայքն էր, որն իր հզորության գագաթնակետին հասավ Արևելքի տիրակալ, արքայից-արքա Տիգրան Մեծի գահակալության օրոք (Ք. ա. 95-56 թթ.): Նա ծնկի բերեց պարթևներին և Եփրատի ափերից հեռացրեց Հռոմեական կայսրության բռնակները, Արևելքի և Արևմուտքի միջև կարգավորեց տարանցիկ առևտուրը: Նրա մայրաքաղաքներից մեկը՝ Տիգրանակերտը, կառուցվեց կանխավ մշակված նախագծով՝ Տիգրիսի վերին ավազանում: Կառուցվում են հզոր ամրոցներ: Դրանցից էր Գաննին, որի մասին հիշատակում է հռոմեական պատմիչ Տակիտուսը:

Երվանդունիների տան վերջին արքաներն իշխում էին Սիրիայում, Պոնտոսում, Իբերիայում և Հայաստանում: Բնիկ հայկական այս արքայատոհմին Հայաստանում փոխարինեցին հայ Արշակունիները (66 թ.): Երվանդյան Հայաստանի մշակույթը հելլենիստականի և հինարևելյանի սինթեզ է, բովանդակությամբ՝ խիստ ավանդական: Այն դարձավ քրիստոնյա Արևելքի մշակույթի աղբյուրներից մեկը:

Արտաշատ, Աֆրոդիտի քանդակը, Ք.ա. II-I դդ.

Վաղարշապատ, Մելագրոսի արձանիկի գլուխը, I-II դդ.

Artashat, statue of Aphrodite, 2nd-1st cc. BC

Vagharshapat, head of Meleagros figurine, 1st-2nd cc. AD



Արտաշատ, հատված բաղնիքի հատակի խճաքանդակից, I-II դդ.


Գաննի, բաղնիքի հատակի խճաքանդակ, I-III դդ.

Artashat, Fragment of a mosaic floor in a bath, 1st-2nd cc. AD

Տիգրան Մեծի դրամը, Ք.ա. I դ.

Coin of the Tigran the Great, 1st c. BC

Garni, mosaic floor in a bath 1st-3rd cc. AD



handicraft products and raw materials as narrated by Roman naturalist, Pliny the Elder. Armenian craftsmen were especially skilled in artistic metalwork, as evidenced by refined ornaments and jewelry: bracelets with animal-headed ends, pectorals, as well as tableware made of precious metals with particularly decorated vessel handles, and silver rhytons found at Van, Armavir, Artashat, Lori Berd, and other sites.

The largest of the countries of Hellenistic Armenia was Greater Armenia (*Armenia Major* in Latin), reaching its apogee during the reign of king of kings Tigran the Great (95-56 BC). He defeated the Parthian Empire and repelled the Roman aggression away from the banks of the Euphrates, supporting transit trade coming from the East. One of the capitals of his empire, Tigranakert, was built according to an elaborate plan along the banks of the upper Tigris River. Mighty fortresses were built, such as the fortress of Garni, mentioned by the Roman historian Tacitus.

At the beginning of Christian era, the last kings related to the Yervandean dynasty ruled in Syria, Pontus, Iberia, and Armenia. These indigenous Armenian kings were replaced by the Parthian Arsacids (66 AD). The culture of Yervandean Armenia was a synthesis of Hellenistic and Ancient Near Eastern cultures within a very traditional local context.

Հովհաննես Սանամյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (301-640 թթ.)




Հայաստանի՝ վաղ ֆեոդալիզմի արվեստի բնորոշ հատկանիշներից է եկեղեցական ինքնատիպ ճարտարապետությունը: Սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների արմատական փոփոխությունները հիմք հանդիսացան 301 թ. քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու համար: Հոգևոր-քաղաքական նոր սկզբունքները նախադրյալներ ստեղծեցին Վանի թագավորության և հելլենիստական Հայաստանի ավանդույթներից բխող ազգային ինքնատիպ ճարտարապետության ձևավորման և զարգացման համար:


Հայաստանի դիրքը՝ արևելքի և արևմուտքի առևտրական ճանապարհների խաչմերուկում, նպաստեց հին քաղաքների (Արտաշատ, Վաղարշապատ, Վան և այլն) վերակառուցմանն ու զարգացմանը, ինչպես նաև նոր կենտրոնների հիմնադրմանը (Դվին, Արշակունյաց): Վաղ միջնադարյան Հայաստանի քաղաքները բաղկացած էին ճարտարագիտական և պաշտպանական կառույցներից, աշխարհիկ բնույթի բնակելի, հասարակական և կենցաղային բազմաթիվ շինություններից, այդ թվում՝ արքայական, իշխանական և հոգևոր բարձրաստիճան սպասավորների պալատական համալիրներից, ընդունելության դահլիճներից և սեղանատներից:

Երկու տասնամյակ շարունակ աշխարհում առաջին և միակ քրիստոնեական պետությունը Հայաստանն էր: Եվ բնական է, որ այստեղ, IV դարից ի վեր, սկսեցին ինքնուրույն մշակել պաշտամունքային շենքերի նոր տիպեր, քրիստոնեության կանոններից բխող եկեղեցական կառույցների ճարտարապետական սկզբունքներ՝ դրանց նախատիպերը չունենալով հարևան երկրներում: Արդյունքում ձևավորվեց հայ եկեղեցական ճարտարապետության դպրոցը, որի ստեղծած բազմաթիվ ձևերը հատուկ են միայն Հայաստանի շինարվեստին:

IV-VII դարերից մեզ են հասել հիմնականում կոթողային և պաշտամունքային կառույցներ: Հայաստանի առաջին եկեղեցիներն ունենին միանավ և եռանավ բազիլիկ հորինվածք: Գերիշխում են միանավ սրահները, որոնք կարելի է ստորաբաժանել չորս տիպի. ա/ ներգծված խորանով (Տեղ, Լեռնակերտ, Ագարակ), բ/ արտաքուստ շեշտված խորանով (Փարպի, Ոսկեվազ, Վերիշեն), գ/ միակողմ արտաքին սրահով (Գառնի, Թանահատ, Դվին) և դ/ երեք կողմից սրահներով եզերված (Գոսևանք, Կուրթան, Գյուլագարակ) եկեղեցիներ: Ընդարձակ աղոթասրահներով եռանավ բազիլիկներ




Փորձաքանդակ



Hovhannes Sanamyan

ARMENIAN ARCHITECTURE OF THE EARLY MIDDLE AGES (301-670 AD)



Էջ 58
Քաղաքաղի շրջան,
Ծիծեռնավանք, II-VII դդ.
page 58
Qashatagh region,
Tsitsernavank, 2nd-7th cc. AD

Աշտարակ, Կարմրավոր
եկեղեցի, VII դ.
Ashtarak, Karmavor church,
7th c. AD

Էջ 59
Էջմիածին, Սր Հռիփսիմե
եկեղեցի, 618 թ.
page 59
Echmiadzin, church
of St. Hripsime, 618 AD

Մաստարա, Սր Հովհաննես
եկեղեցի, V-VI դդ.
Mastara, St. John's Church,
5th-6th cc. AD

A unique church architecture is one of the main features of the Armenian art during the Early Medieval Period. The changes in socio-political relations resulted in the adoption of Christianity as a state religion of Armenia in 301 CE. New ideological-spiritual principles and influences from the Mediterranean and adjacent areas of the Near East became prerequisites for the formation and further development of a unique national religious architecture rooted in the earlier traditions of Antiquity.

The location of Armenia, on the crossroads of trade routes between the east and west, was favorable to the rebuilding of ancient cities (Artashat, Vaghrashapat, Van, and others) as well as to the founding of new urban centers (Dvin, Arshakavan). Cities of Early Medieval Armenia included monumental buildings and fortifications, public and private secular buildings, including palatial complexes that belonged to the secular and religious elites, with reception and banquet halls.

From the fourth century on ward, new principles of religious architecture were created and derived from Christian canons. As a result, the Armenian architectural school was formed, determining the character of many architectural forms that are specific only to Armenian art.

The earliest Christian churches of Armenia are represented by basilicas with either a single or triple naves. Among them, the single-nave plan was dominant. It can be subdivided into four main types: those with an enclosed apse absorbed into the rectangular design (Tegh, Lernakert, Agarak); an externally emphasized apse (Parpi, Voskevaz, Verishen); third, basilicas with a gallery attached to the exterior on one side (Garni, Tanahat, Dvin); and fourth, with galleries surrounding the main church on three sides (Gtevank, Kurtan, Gyulagarak). Triple-nave basilicas were larger and built in cities and religious centers (Kasakh, Aghtsk, Ashtarak, Yeghvard, Yerereuyk, Tsitsernavank, Dvin, Koghb, and others).

Armenian architects of the fourth century elaborated new forms of domed compositions and, specifically, the churches with centrally located dome. Prototypes of those stone buildings can be identified in the designs of Armenian vernacular houses with wooden roofs of the *hazarashen* type.

The earliest domed monument of Armenia was the Cathedral of Etchmiadzin, built in the early fourth century by King Trdat III and Gregory the Illuminator. Its dome-centric composition was reinterpreted in the fifth century Cathedral of St. Thaddeus at Bagaran. This



րը, որպես կանոն, կառուցվել են խոշոր քաղաքներում և կրոնական կենտրոններում (Քասաղ, Աղք, Աշտարակ, Եղվարդ, Երերույք, Ծիծեռնավանք, Դվին, Կողբ և այլն):

IV դ. հայ ճարտարապետները մշակել են եկեղեցիների միանգամայն նոր՝ գմբեթավոր և կենտրոնագմբեթ հորինվածքներ՝ քարե գմբեթների նախատիպն ունենալով հայկական ժողովրդական տան փայտե, վրանաձև՝ «հագարաշեն» ծածկը, որը նկարագրել է դեռ Քսենոֆոնը:

Հայաստանում վաղագույն գմբեթավոր հուշարձանը Էջմիածնի Մայր տաճարն է, որը 301-303 թթ. կառուցել են Տրդատ Գ արքան և Գրիգոր Լուսավորիչը: Այս կենտրոնագմբեթ հորինվածքը՝ յուրօրինակ և ինքնատիպ ձևով, V դ. մարմնավորվել է Բագարանի Սբ Թադեոս եկեղեցում: Հայ ճարտարապետների գեղարվեստական այս մեծ նվաճումը հետագայում դուրս եկավ երկրի սահմաններից և տարածվեց Բյուզանդիայում, ապա՝ կենտրոնական և արևմտյան Եվրոպայում:

V դ. վերջից Հայաստանում համատարած են դառնում տարբեր ձևերի կենտրոնագմբեթ եկեղեցիները, որոնց ներքին հորինվածքի հիմքը միաձույլ տարածության ստեղծումն էր: Դրանցից են Տեկորի, Օձունի, Մրենի, Գայանեի, Բագավանի գմբեթավոր բազիլիկները, Պտղնիի և Արուճի միանավ գմբեթավոր և Դվինի ու Թալին եռախորան գմբեթավոր դահլիճները, որոնք սերում են եռանավ բազիլիկներից:

VI դ. մշակվեցին և VI-VII դդ. կատարելագործվեցին փոքր գմբեթավոր՝ «ազատ խաչ» տիպի եկեղեցիները՝ իրենց բազմազան տարբերակներով. քառախորան (Մորո ձոր, Արզնի, Փարպի), եռախորան (Դորբանտ, Պենգաշեն, Դաշտաղեն), միախորան (Կոշ, Կարմրավոր, Լմբատավանք), որոնցում խաչաձև ծավալն առավել ցայտուն և հստակ է արտահայտված:

Հայաստանում, խաչաձև կենտրոնագմբեթ հորինվածքի զարգացման հաջորդ փուլում, ստեղծվեցին «մաստարայատիպ» եկեղեցիներ (Մաստարա, Ոսկեպար, Արթիկ): Սրանց գեղարվեստական հիմնական արժանիքներն են՝ խոշոր գմբեթով պսակված ներքին տարածքի ամբողջականությունը և ընդարձակությունը, վերապահ մոնումենտալությունը:

Կենտրոնագմբեթ համակարգը Հայաստանում զարգացման նոր աստիճանի հասավ VI դ., երբ ձևավորվեցին անկյունային խորշերով քառախորան՝ Ավան-հոիփսիմետատիպ եկեղեցիները (Գառնահովիտ, Սիսավան, Արծվաբեր):

VI-VII դդ. մշակվում է խաչաձև-կենտրոնագմբեթ հորինվածքից սերող՝ բազմախորան եկեղեցիների տիպը (Եղվարդ, Իրինդ, Արագած), որտեղ առավել հստակեցված է կենտրոնագմբեթությունը:



Էջ 60

Աղք, խոյի հարթաքանդակ, IV դ.

Չիչխանավանք, խաչքար, VI-VII դդ.

Աղք, եղջերվի հարթաքանդակ, IV դ.

Թալին, քառակող կոթող, IV-V դդ.

Աղուդի, մահարձան-դամբարան, V-VII դդ.

Զվարթնոցը Արարատի ֆոնին, 642-662 թթ.

page 60

Aghtsq, bas-relief depicting a ram, 4th c. AD

Chichkhanavank, khachqar (cross-stone), 6th-7th cc. AD

Aghtsq, bas-relief depicting a deer, 4th c. AD

Talin, four-sided stela, 4th-5th cc. AD

Aghudi, monument-crypt, 5th-7th cc. AD

Echmiadzin, Zvartnots cathedral with Mount Ararat in the background, 642-662 AD

exceptional artistic achievement of Armenian architects later spread throughout the country, expanding beyond the borders of Armenia into Western Europe through the Byzantine Empire.

From the end of the fifth century, dome-centric churches became widespread in Armenia. The principal aim of their design was the creation of a large, spatially undivided interior. Domed basilicas (Tekor, Odzun, Mren, Gayane, Bagavan), domed halls (Ptghni, Aruch), and triple-apse basilicas (Dvin, Talin) – all originate from the design of triple-nave basilica.

In the sixth century, a new type of architectural compositions called the “free cross” was developed and implemented in the construction of small churches. It became more elaborate during the following centuries. The refinements of the “free cross” plan are represented in many varieties – quadruple-apse (Moro Dzor, Arzni, Parpi) – triple-apse (Dorbant, Pemzashen, Dashtadem), mono-apse (Kosh, Karmavor, Lmbatavank), in which the cross shape is emphasized and clearly expressed.

The next stage in the development of the dome-centric composition in Armenia is represented by the churches of “Mastara type” (Mastara, Voskepar, Artik). The main artistic feature of the Mastara-type church was the completeness and grandeur of vertical monumentality through a massive dome crowning the interior.

The dome-centric system was further developed in the sixth century with the addition of corner niches in quadruple-apse churches of Avan-Hripsime type (Garnahovit, Sisavan, Artsvaber).

In the sixth and seventh centuries, multiple-apse church types developed on the basis of dome-centric composition (Yeghvard, Irind, Aragats) with emphasis on the central axis.

The desire to create new compositions of cross-shaped dome-centric churches on a grand scale was realized in the mid-seventh century in the architectural masterpiece of that epoch – the cathedral of Zvartnots,



Խաչաձև-կենտրոնագմբեթ եկեղեցիների նոր հորինվածքներ ստեղծելու ձգտումը VII դ. կեսին պասկվել է դարաշրջանի ճարտարապետության գլուխգործոց Զվարթնոցով, որտեղ բազմանիստ պարագծում ներգծված քառախորան միջուկն ամփոփված է եռաստիճան ծավալում: Այս տաճարում հանրագումարի բերվեցին վաղ միջնադարի հայկական ճարտարապետության բոլոր նվաճումները:

Հայաստանի՝ վաղ միջնադարի մեմորիալ հուշարձանները հիմնականում դամբարաններ (Աղցք, Ամարաս, Անի, Էջմիածին), կոթողներ (Ավան, Առուճ, Դսեղ, Թալին և այլն), հուշայուններ (Անգեղակոթ, Օշական, Ողջաբերդ), մահարձաններ (Օձուն, Աղուղի) և խաչքարեր են (Դվին, Թալին, Մաքենիս, Ծիծեռնավանք), որոնք տիպիկ ազգային երևույթ են՝ բացառիկ համաշխարհային արվեստում:

where the quadruple-apse core enclosed in a polygon was completed in three storeys. All achievements of the Armenian Early Medieval architecture were brought together in the design of Zvartnots.

After the adoption of Christianity, memorial monuments were erected across Armenia. Those mainly included mausoleums (Aghtsq, Amaras, Ani, Etchmidzin), *kotogh* – monuments (Avan, Aruch, Dsegh), memorials stele (Angeghakot, Oshakan, Voghjaberd), mortuary monuments (Odzun, Aruch) and stone crosses (Dvin, Talin, Makenis, Tsitsernavank). These monuments represent a typical national phenomenon in world art.

Էջմիածին, Զվարթնոց եկեղեցի, որվագ կամարաշարից, 642-662 թթ.

Echmiadzin, Church Zvartnots cathedral, fragment of an arch, 642-662 AD



Հովհաննես Սանամյան
**ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՅԱԾ
 ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (885-1399 թթ.)**



885 թ. Հայաստանը թոթափում է արաբական լուծը և վերականգնում անկախ պետականությունը: Բագրատունյաց հարստության օրոք հաստատվում են նպաստավոր պայմաններ երկրի տնտեսական և քաղաքական զարգացման համար: Ընդլայնվում և բարգավաճում են հին քաղաքները (Դվին, Նախճավան, Վան, Կարին), հիմնվում են նորերը (Անի, Կարս, Լոռե, Կապան, Արծն, Խլաթ, Մանազկերտ և ուրիշներ): Քաղաքները կարևոր դերակատարում են ստանձնում Հայաստանի տնտեսական, հոգևոր և հասարակական կյանքում: Հանդես են գալիս ճարտարապետական նոր ձևեր ու դպրոցներ՝ ինչպես Բագրատունյաց տիրույթներում, այնպես էլ Բագրատունիների գերիշխանությանը ենթակա հայկական առանձին թագավորություններում (Վասպուրական, Տաշիր-Ձորագետ, Սյունիք, Կարս):

Ռազմագիտական մտքի ու կառուցողական արվեստի բարձր ինժեների արգասիք են երկրի ռազմավարական հանգույցներում կառուցված ամրոցները (Տիգնիս, Մաղասերդ, Ամբերդ, Հանդաբերդ և այլն), որոնց ծավալատարածական լուծումները պայմանավորված են պաշտպանական առումով նպաստավոր տեղանքի պայմանների առավել արդյունավետ օգտագործմամբ:

Զարգացած միջնադարում հայկական ճարտարապետության նոր վերելքը ոչ միայն շարունակեց վերարտադրել վաղ միջնադարի հատակագծային և ծավալատարածական առումով կատարելության հասցված եկեղեցիների ավանդական տիպերը (Մաքենյանց վանք, Հայրավանք, Սևանի կղզու Սբ Աստվածածին, Շողագավանք, Արծվանիստ, Աղթամարի Սբ Խաչ, Վարագավանքի Սբ Աստվածածին, Անիի Սբ Առաքելոց, Գագկաշեն), այլև, կատարելագործելով դրանք, հասցրեց զարգացման նոր մակարդակի (Շիրակավան, Արգինա, Մանահին, Հաղպատ, Կեչառիս, Բջնի, Մարնաշեն, Ամբերդ): Հայ ճարտարապետներ Մանվելը, Տրդատը, Վեցիկը, Մինասը, Պողոսը, Սիրանեսը, Մոմիկը և այլք արմատավորեցին դարաշրջանի ճակատի հատկանիշները՝ համաչափական նոր համակարգ, վերապացություն, ներքին տարածության նորովի կազմակերպում, արտաքին պատերի պլաստիկ մշակում, դեկորատիվ ճոխ հարդարում, ճարտարապետության մեջ գեղատեսիլության, մոնումենտալ նկարչության և բազմագունության սկզբունքների կիրառում և այլն:

Զարգացած միջնադարում հայ արվեստի և ճարտարապե-

Վանա լիճ, Ախթամարի վանքը, Սբ Խաչ եկեղեցի, 915-921 թթ.

Van Lake, Akhtamar monastery, Church of the Holy Cross, 915-921 AD

Անի, Մայր տաճար, 989-1001 թթ.


Ani, Cathedral, 989-1001 AD

Անի, Սմբատաշեն պարիսպներ, X դ.

Ani, Smbatashen fortifications of the city, 10th c.

Hovhannes Sanamyan

ARMENIAN ARCHITECTURE OF THE HIGH MIDDLE AGES (885-1399 AD)



Նորավանք, Բուրթել իշխանի մատուռ-դամբարանը, 1339 թ. Noravank, chapel memorial to the Prince Bourtel, 1339

Նորավանք, Հայր Աստծո բարձրաքանդակը, 1221 թ. Noravank, high relief of God the Father Almighty, 1221

Նորավանք, Աստվածամոր բարձրաքանդակը, 1339 թ. Noravank, high relief of Virgin Mary, 1339



In 885 the Caliph of the Abbasid Islamic Caliphate and the Byzantine Emperor bestowed the royal crown upon grand prince Ashot of the Bagratuni dynasty, which ended one of the darkest periods of Armenian history – the times of direct domination by the Caliphate. The restoration of the Armenian kingdom was a result of the internal crisis of the Caliphate combined with the struggle of the Armenian nobility for the independence of their country. The restoration of the kingdom was followed by the revival of urban life. Urban growth resumed at ancient Armenian cities (Dvin, Nakhchavan, Van, Karin) and new ones (Ani, Kars, Lore, Kapan, Artsn, Khlat, Manazkert) were founded. The intensification of domestic and international trade, expansion in craft production and agriculture had a profound impact on all aspects of life, including artistic activity and, especially, architecture. New architectural forms and schools emerged both in the Bagratuni Kingdom and in other Armenian feudal kingdoms, which emerged across the country in the 9th-11th centuries (Syunik, Vaspurakan, Tashir-Dzoraget).

Fortresses (Tignis, Maghasberd, Anberd, Handaber) founded by kings and princes in strategically important spots present real achievements of military architectural thinking and a deep knowledge of building technique. Their spatial-volumetric compositions were developed taking into account the defensive characteristics of the landscape and the strategic importance of localities.

During the High Middle Ages, the Armenian architectural practice not only continued the reproduction and creative adaptation of early medieval planigraphic and spatial-volumetric traditional compositions (Makeneanc monastery, Hayravank, Sevan Island St. Astvatsatsin, Shoghagavank, Artsvanist, Aghtamar St. Khach (Cross), Varagavank St. Astvatsatsin, Ani St. Arakelots, Gagkashen), but also innovatively developed those, bringing to a level of perfection (Shirakavan, Argina, Sanahin, Haghpat, Kecharis, Bjni, Marmashen, Amberd). Armenian architects – Manvel, Trdat, Vetsik, Minas, Poghos, Siranes, Momik and others established new stylistic canon of the epoch introducing new proportionality and organization of the internal space, decorative plastic treatment of external walls, new principles of application of monumental painting and polychromy in architecture.

Ani, the new capital of the Bagratuni kingdom became the main center of development of arts and architecture from the 10th through the 13th centuries. It was distinguished not only by its Christian cathedrals and churches (the Main Cathedral, Gagkashen, Arakelots, Saviour's,



Մեծ Մասրիկ, խաչքար, 881 թ.

Big Masrik, *khachqar*, 881 AD

Հաղպատ, խաչքար, XIII դ.

Haghpat, *khachqar*, 13th c.




տության զարգացման կենտրոնն Անին էր: Այստեղ կառուցվել են ոչ միայն հոգևոր (Մայր տաճար, Գագկաշեն, Առաքելոց, Փրկչի, Արուղամբեց, Հոնենցի եկեղեցիները), այլև պաշտպանական (Աշոտաշեն և Սմբատաշեն պարիսպներ), ճարտարագիտական (կամուրջներ) և աշխարհիկ (Պարոնի պալատը, հյուրատներ, մեծատունների ապարանքներ) բարձրարվեստ գլուխգործոցներ:

IX-XI դդ. Հայաստանում կազմավորվում են մի շարք վանական խոշոր համալիրներ (Տաթև, Սևան, Հայրավանք, Գոթևանք, Խծկոնք, Մարմաշեն, Սանահին, Հաղպատ և այլն), որոնք բաղկացած են եկեղեցական, քաղաքացիական և կոմունալ բնույթի կառույցներից: XIII-XIV դդ. հիմնականում ավարտվում է Տաթևի, Սանահինի, Հաղպատի, Նորավանքի, Կեչառիսի, Հաղարծնի, Հառիճավանքի, Հովհաննավանքի, Մակարավանքի, Դաղիվանքի և այլ համալիրների կառուցապատումը: Ձևավորվում են հոգևոր նոր համալիրներ՝ Գեղարդավանքը, Գանձասարը, Գոշավանքը, Սաղմոսավանքը, Մշկավանքը, Դեղձնուտի, Խորակերտի, Քոբայրի, Աղթալայի, Խուճապի, Նեղուցի, Կիրանց, Առաքելոց և այլ վանքեր: Մրանք համալրվում են գավիթ-ժամատներով (Հոռոմոս, Հայրավանք, Մարմաշեն), զանգակատներով (Սանահին, Հաղպատ, Դաղիվանք), դպրոցներով (Սանահին, Տաթև, Գլաձոր), գրատներով (Սանահին, Սաղմոսավանք, Դաղիվանք), սեղանատներով (Հաղարծին, Քոբայր, Դաղիվանք), աղբյուրներով (Սանահին, Հաղպատ) և այլ կոմունալ, տնտեսական ու արտադրական շենքերով:

Վանական համալիրները՝ կազմավորված տարբեր ժամանակների և կիրառական բնույթի կառույցներով, առանձնանում են որպես տարածական և գեղարվեստական, միասնական և համահունչ, բնական միջավայրի հետ բացառիկ ներդաշնակ ճարտարապետական համակառույցներ: Դրանք միաժամանակ հոգևոր-մշակութային կենտրոններ էին, որտեղ կազմում էին մագաղաթե ձեռագիր մատյաններ՝ դրանք զարդարելով զարմանահրաշ մանրանկարներով:

XI-XIV դդ. շինարվեստի ինքնատիպ նմուշներից են ժայռափոր բնակելի թաղամասերը, եկեղեցիներն ու դամբարանները (Գեղարդավանք, Մարտիրոս, Անի, Սպիտակ), կրկնահարկ եկեղեցի-դամբարանները (Նորավանքի Բուրթելաշեն, Եղվարդ, Կապուտան), քարավանատները (Սելիմ, Արուն, Թալին), կամուրջները (Սանահին, Անի, Արվիա) և այլն:

Զարգացած միջնադարի հայ մշակույթի անքակտելի մասն է Կիլիկյան Հայաստանի ճարտարապետությունը: Երկրամասի ֆիզիկա-աշխարհագրական յուրահատուկ պայմանները և դիրքը (արևմուտքի և արևելքի ծովային ու քարավանային առևտրական ուղիների հանգույց) մեծապես նպաստել են քաղաքների, ամրոց-



ք. Եղվարդ, մատուռ-դամբարան, 1301 թ.

Yeghvard city, chapel-memorial, 1301

Տաթևի վանական համալիրը, IX-XIV դդ.

Monastery Complex of Tatev, 9th-14th cc.



Abughamrents, Honents), but also by splendid fortifications (Ashotashen and Smbatashen city walls), engineering (bridges) and secular (Palace of Paron, hostels, villas) constructions.

The appearance and spread of large monastery complexes across the country became one of the most typical features of Armenian architecture, at the same time transforming the socio-economic and cultural makeup of Armenia in the 9th-11th centuries. During that period a number of large monasteries were founded (Tatev, Sevan, Hayravank, Gndevank, Khtskonk, Marmashen, Sanahin, Haghpat etc.), each consisting of several churches along with secular and communal buildings. In the thirteenth and fourteenth centuries, many of these monastery complexes, such as Tatev, Sanahin, Haghpat, Kecharis, Haghartsin, Harichavank, Hovhannavank, Makaravank, Dadivank and others were expanded in the thirteenth and fourteenth centuries, and new large monasteries were built at Geghardavank, Gandzasar, Goshavank, Saghmosavank, Mshkavank, Deghdznut, Kirants, Arakelots, Khorakert, Kobayr, Akhtala, Khuchap, Neghuc and other locations. Churches in these monasteries were complemented with *gavit*-s (vestibule hall in front of a church) (Horomos, Hayravank, Marmashen), bell towers (Sanahin, Haghpat, Dadivank), schools (Sanahin, Tatev, Gladzor), scriptoriums (Sanahin, Saghmosavank, Dadivank), refectories (Haghartsin, Kobayr, Dadivank), architecturally designed water fountains (Sanahin, Haghpat), and other civic buildings.



Հովհաննես Սանամյան Հայկական ճարտարապետությունը զարգացած միջնադարում (885-1399 թթ.)

ների և դղյակների կառուցմանը (Միս, Անարգարա, Լամբրոն, Ճանճիբերդ, Կանչիբերդ, Լևոնկլա, Մոսդ և այլն): Այսան ու Կոռիկոսը եղել են նավահանգիստ-ամրոցներ:

Շարունակելով հայկական բնաշխարհի շինարարական ավանդույթները, Կիլիկիայում հիմնադրվում են մի շարք նշանակավոր եկեղեցիներ (Ջորավարանց, Կոռիկոսի, Սբ Սոֆիայի, Պապեռոնի, Հոռմկլայի, Ադանայի) և վանական համալիրներ (Միհոնվանքը, Սբ Հակոբը, Պապեռոնի, Սկևոսայի, Դրագարկի, Արքայակաղնու, Ակների վանքերը), որոնց ճարտարապետական առանձնահատկություններից է կառույցների դեկորատիվ հարդարանքը:

Մանրանկարչության Կիլիկյան դպրոցը ձևավորվել է տեղի վանական համալիրներում: Մագաղաթե բազմաթիվ մատյաններ զարդարվել են ճոխ պատկերներով, որոնց բնորոշ է գունային հարուստ գամանն և գեղարվեստական մոտիվների ներդաշնակությունը:


Զարգացման նոր աստիճանի է հասնում խաչքարային արվեստը (Սանահին, Օձուն, Գեղարդավանք, Դաղիվանք, Գոշավանք, Նորավանք): Բարձրաբանդակ պատկերներով խաչքարերի լավագույն օրինակներից են Դսեղի «Խաչելություն», Հաղպատի «Ամենափրկիչ» և այլ խաչքարեր:

Անի, Տիգրան Հոնենցի կառուցած Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 1215 թ., բարձրաբանդակ

Ani, Church of St. Gregory the Illuminator, built by Tigran Honents, high relief, 1215

Հաղպատի վանական համալիրը, X-XIII դդ.

Monastery Complex of Haghpat, 10th-13th cc.



ք. Եղվարդ, մատուռ-դամբարան, 1301 թ., բարձրաբանդակ

Eghvard city, chapel-memorial, 1301, high relief

Գոշավանք, խաչքար, 1291 թ.

Goshavank, *khachqar*, 1291



Hovhannes Sanamyan Armenian architecture of the High Middle Ages (885-1399 AD)

Consisting of buildings of various periods and functions, monastery complexes are distinguished by their stylistically integral volumetric and artistic compositions, which were designed in harmony with their natural environments. A centrally important role of those monasteries in the Armenian culture was determined by the fact that they were the main centers of production of literary culture during the High Middle Ages, where masterpieces of illuminated manuscripts were created.

Rock-carved churches and mausoleums (Geghardavank, Martiros, Ani, Spitak), unique double-storey church-mausoleums (Noravank, Yeghvard, Kaputan), caravanserais (Selim, Aruch, Talin) and bridges (Sanahin, Ani, Arpa) are also exceptional examples of the building art of the eleventh to fourteenth centuries.

The cultural heritage created on the northeastern coast of the Mediterranean in the Armenian kingdom of Cilicia during the twelfth-fourteenth centuries represents one of the most distinctive parts of the Armenian civilization. The specific geographic position of Cilicia with its naval ports on the sea coast, high mountain ranges of the Taurus, and a fertile plain in between defined the importance of that country located at the juncture of maritime and overland caravan trade of the medieval world. Supported by European Crusaders and Mongols, the Armenian kingdom of Cilicia successfully repelled many encroachments of neighboring Muslim states for three centuries. The Armenian architectural heritage of Cilicia is represented by remains of cities, fortresses, and castles (Sis, Anarzaba, Lambron, Chanchiberd, Odzaber, Levonkla, Mosd, and others). Among those, the Mediterranean ports of Korikos and Ayas, protected by powerful fortification systems, were especially important.

Christian religious architecture of the Cilician Armenian kingdom continued the traditions developed during the previous periods of architectural creativity in Greater Armenia. A number of significant churches (Zoravarants, Korikos, St. Sophia, Paperon, Hromkla, Adana) and monasteries (Michovank, St. Hakob, Skevra, Drazark, Arkayakaghni, Akner) were built during that period. They are witnessing a further development of sophisticated decorative art. The Cilician school of Armenian manuscript illumination formed and grew in these monasteries, representing a distinctively separate tradition in Armenian art, characterized by a harmonious combination of rich and bright colors with balanced compositions of the imagery.

During the High Middle ages the art of the *khachkar* (cross-stone) reached its classical stage (Sanahin, Tudevordu – artist Mkhitar, Odzun, Geghardavank – artist Galdzak, Dadivank, Goshavank – artist Poghos, Noravank – artist Momik). Best samples of *khachkars* with bas-reliefs are the “Crucifixion of Dsegh,” “Amenaprkich” (All-Savior) of Haghpat, the *khachkar* of Imirzek, and several others.



Սանահնի վանական
համալիր, X-XIII դդ.

Monastery Complex
of Sanahin, 10th-13th cc.

պատկերների անվանացանկ

Նկարների ընտրությունը և ծանոթագրությունների կազմումը՝ Հակոբ Միմոնյանի

catalogue

Selection of illustrations and captions by Hakob Simonyan

էջ /page նկարագրություն

description



1 ՀՀ Արագածոտնի մարզ, Վերին Նավեր, դամբարան IB, հերոս-արքայի դիմաքանդակ, Ք.ա. XVI-XV դդ., բիտում, ոսկի, վերականգնում՝ արծաթ, ոսկի (պեղ. և լուս.՝ Հ. Միմոնյանի : *Լայր*՝ Hakob Simonyan, 2012, p. 113)

Aragatsotn Marz (Province), RA, Verin Naver, burial IB, a hero-king medallion depicting, 16th-15th cc. BC, bitumen, gold, reconstruction (excavations & photo by H. Simonyan. *In*: Hakob Simonyan, 2012, p. 113)



3 Արցախ, Քաշաթաղի շրջան, Ծար, հրեշտակի հարթաքանդակ, X-XIII դդ., բազալտ (լուս.՝ Հ. Միմոնյանի: *Լայր*՝ Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, 2007, էջ 10)

Artsakh, Qashatagh region, Tsar, relief depicting an angel, 10th-13th cc., basalt (photo by H. Simonyan. *In*: The main results of archaeological investigations in 1990-2005 in Artsakh and liberated regions, exhibition (in Armenian) catalog, 2007, p. 10)



5 ՀՀ Կոտայքի մարզ, Քարաշամբ, Մեծ դամբարանաբլուր, երեսապատման դրվագազարդ թիթեղ, Ք.ա. XXIII-XXII դդ., ոսկի (պեղ.՝ Վ. Հովհաննիսյանի, լուս.՝ Վ. Հակոբյանի: *Լայր*՝ Հին Հայաստանի ոսկին [այսուհետ՝ ՀՀՈ], 2007, աղ. IX.)

Kotayq Marz, RA, Qarashamb, The Big Kurgan, embossed foil-plate, 23rd-22nd cc. BC, gold (excavations of V. Hovhannissyan, photo by V. Hakobyan. *In*: Gold of Ancient Armenia [hereinafter GAA], (in Armenian), 2007, table IX.)



8 ՀՀ Արագածոտնի մարզ, Վերին Նավեր, դամբարան II, Ք.ա. XV-XIV դդ. (պեղ. և լուս.՝ Հ. Միմոնյանի)

Aragatsotn Marz, RA, Verin Naver, burial II, 16th-15th cc. BC, (excavations & photo by H. Simonyan)



9 Երևան, Նոր Նորքի զանգված, ձկնակերպ վիշապակոթող, Ք.ա. III-II հազ., բազալտ (լուս.՝ Հ. Միմոնյանի)

Yerevan, Nor Norq district, fish-like vishap stela, 3rd-2nd mill. BC, basalt (photo by H. Simonyan)



10 ՀՀ Սյունիքի մարզ, Ջորաց բարեր, մենաբարեր, դամբարաններ, Ք.ա. III-II հազ. (լուս.՝ Զ. Սարգսյանի)

Syuniq Marz, RA, Zorats Qarer, menhirs, burials, 3rd-2nd mill. BC (photo by Z. Sargsyan)



12 ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք, Զույգաղբյուր, Մեծ դամբարանաբլուր, Ք.ա. IV-III հազ. (պեղ. և լուս.՝ Հ. Միմոնյանի)

Syuniq Marz, RA, Gorayq, Zuygaghbyur, The Big kurgan, 4th-3rd mill. BC (excavations & photo by H. Simonyan)



14 ՀՀ Տաշիրի մարզ, Կուրթան, ձեռքի հատիչ, վաղ աշել՝ 1,9-1,8 միլիոն տարի մեզանից առաջ, բազալտ (պեղ. և լուս.՝ Վ. Լյուբլինի և Ե. Բելյանայի)

Tashir Marz, RA, Kurtan, handaxe, Early Acheulian period (1.9-1.8 million years ago), basalt (excavations & photo by V. Lyublin & Ye. Belyaeva)



ՀՀ Տաշիրի մարզ, Կուրթան, ձեռքի հատիչ, միջին աշել՝ 600-250 հազար տարի մեզանից առաջ (այսուհետ՝ հ.տ.մ.ա.), բազալտ (պեղ. և լուս.՝ Վ. Լյուբլինի և Ե. Բելյանայի)

Tashir Marz, RA, Kurtan, handaxe, Middle Acheulian period (600-250 thousand years ago, hereafter Kyr), basalt (excavations & photo by V. Lyublin & Ye. Belyaeva)



ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք, Զույգաղբյուր, ձեռքի հատիչ, ուշ աշել՝ 250-40 հ.տ.մ.ա., վանակատ (պեղ. և լուս.՝ Հ. Միմոնյանի)

Syuniq Marz, RA, Gorayq, Zuygaghbyur, handaxe, Late Acheulian period (250-40 Kyr), obsidian (excavations & photo by H. Simonyan)



15 ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք, Զույգաղբյուր, ձեռքի հատիչ, ուշ աշել՝ 250-40 հ.տ.մ.ա., վանակատ (պեղ. և լուս.՝ Հ. Միմոնյանի)

Syuniq Marz, RA, Gorayq, Zuygaghbyur, handaxe, Late Acheulian period (250-40 Kyr), obsidian (excavations & photo by H. Simonyan)



ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք, Զույգաղբյուր, լևալուայան տիպի գործիք, ուշ աշել՝ 250-40 հ.տ.մ.ա., վանակատ (պեղ. և լուս.՝ Հ. Միմոնյանի)

Syuniq Marz, RA, Gorayq, Zuygaghbyur, levallois tool, Late Acheulian period (250-40 Kyr), obsidian (excavations & photo by H. Simonyan)



ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք, ձեռքի հատիչ, ուշ աշել՝ 250-40 հ.տ.մ.ա., վանակատ (պեղ. և լուս.՝ Հ. Միմոնյանի)

Syuniq Marz, RA, Gorayq, Zuygaghbyur, handaxe, Late Acheulian period (250-40 Kyr), obsidian (excavations & photo by H. Simonyan)



16 ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք, ձեռքի հատիչ, ուշ աշել՝ 250-40 հ.տ.մ.ա., վանակատ (պեղ. և լուս.՝ Հ. Միմոնյանի)

Syuniq Marz, RA, Gorayq, Zuygaghbyur, handaxe, Late Acheulian period (250-40 Kyr), obsidian (excavations & photo by H. Simonyan)



16 ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք, ուշ աշելյան նախամարդու բնակեցրած սարահարթը (լուս.՝ Հ. Միմոնյանի)

Syuniq Marz RA, Gorayq, the plateau inhabited by prehistoric man in the Late Acheulian period (photo by H. Simonyan)



18 ՀՀ Արմավիրի մարզ, Ակնաշեն, հատված պեղավայրից, Ք.ա. VI հազ. (պեղ. և լուս.՝ Ռ. Բադալյանի)

Armavir Marz, RA, Aknashen, a scene from the excavations, 6th mill. BC (excavations & photo by R. Badalyan)



19 ՀՀ Արմավիրի մարզ, Առատաշեն, ոսկրե տեղ և քարե կացիներ, Ք.ա. VI հազ. (պեղ.՝ Ռ. Բադալյանի և Պ. Լոմբարդի, գրչանկարը՝ Հ. Սարգսյանի)

Armavir Marz, RA, Aratashen, bone javelin and stone axes, 6th mill. BC (excavations & photo by R. Badalyan & P. Lombard, drawing by H. Sargsyan)



ՀՀ Արարատի մարզ, Մասիսի-բլուր, կացիկ, Ք.ա. VI հազ., ստեատիտ (պեղ.՝ Գ. Արեշյանի, Պ. Ավետիսյանի և Չ. Ստանիշի, լուս.՝ Հ. Միմոնյանի)

Ararat Marz, RA, Masis-Blur, a small axe, 6th mill. BC, steatite (excavations of G. Areshian, P. Avetisyan and C. Stanish, photo by H. Simonyan)



ՀՀ Շիրակի մարզ, Անի Պեմզա, միջուկ, Ք.ա. VI հազ., վանակատ, Հայաստանի պատմության թանգարան (լուս.՝ Վ. Հակոբյանի: *Ըստի՛ր Ս* подножия Арарата [*այսուհետև՝ Ս* подножия...], 2008, рис. 1)

Shirak Marz, RA, Ani Pemza, nucleus, 6th mill. BC, obsidian, History Museum of Armenia (photo by V. Hakobyan. In: U podnozhia Ararata [hereinafter U podnozhia...], (in Russian), 2008, fig. 1)




20 ՀՀ Արմավիրի մարզ, Առատաշեն, պեղված կացարաններ, Ք.ա. VI հազ. (պեղ. և լուս.՝ Ռ. Բադալյանի ու Պ. Լոմբարդի: *Ըստի՛ր Au Pied Mont Ararat. Splendeurs de L' Arménie Antique [այսուհետև՝ Au Pied...], 2007, p. 30)*

